

Կ-1095-11.10.2016-ՄԻ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ**

**ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

**ԳԼՈՒԽ 1.**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

1. Սույն սահմանադրական օրենքը սահմանում է կուսակցությունների իրավական կարգավիճակը, կարգավորում է կուսակցությունների ստեղծման, պետական գրանցման, կառուցվածքի, իրավունքների և պարտականությունների, գույքի ձևավորման, դրա աղբյուրների, ֆինանսական գործունեության, կուսակցությունների հանրային աջակցության, կուսակցությունների հաշվետվությունների և աուդիտի, միջազգային գործունեության, նրանց գործունեության նկատմամբ ֆինանսական վերահսկողության, գործունեության կասեցման, գործունեության վերսկսման, արգելման, վերակազմակերպման և լուծարման հետ կապված հարաբերությունները:

**Հոդված 2. Կուսակցության հասկացությունը**

1. Կուսակցությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կամավոր միավորում է, որի նպատակը հանրաքվեներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու և

հասարակության ու պետության քաղաքական կյանքին մասնակցության այլ ձեւերով ժողովրդի քաղաքական կամքի ձեւավորմանն ու արտահայտմանը նպաստելն է:

2. Կուսակցությունը պետական գրանցման պահից ձեռք է բերում ոչ առևտրային իրավաբանական անձի կարգավիճակ:

### **Հոդված 3. Կուսակցությունների մասին օրենսդրությունը**

1. Կուսակցությունների կազմավորման եւ գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սույն օրենքով, ինչպես նաեւ սույն օրենքին համապատասխան ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական այլ ակտերով:

### **Հոդված 4. Կուսակցությունների գործունեության սկզբունքները**

1. Կուսակցությունները հավասար են օրենքի առջեւ՝ անկախ իրենց ծրագրային փաստաթղթերում արտացոլված գաղափարախոսությունից, նպատակներից, խնդիրներից և այլ հանգամանքներից:

2. Կուսակցության գործունեությունը հիմնվում է անդամության կամավորության, անդամների իրավահավասարության, սեռից, ռասայից, մաշկի գույնից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից կախված խտրականության արգելման, կուսակցության անկախության, ինքնակառավարման, կոլեգիալության, գործունեության թափանցիկության, հրապարակայնության եւ հաշվետվողականության սկզբունքների վրա:

3. Կուսակցությունները, հաշվի առնելով կուսակցությունների գործունեության սկզբունքները, ինքնուրույն են որոշում իրենց ներքին կառուցվածքը, նպատակները, գործունեության ձեւերն ու մեթոդները, կուսակցության մարմինների

ծնավորման կարգը, որոնք չեն կարող հակասել ժողովրդավարական սկզբունքներին:

### **Հոդված 5. Կուսակցությունների ստեղծման եւ գործունեության սահմանափակումները**

1. Արգելվում է այն կուսակցությունների ստեղծումը կամ գործունեությունը, որոնք քարոզում են սահմանադրական կարգի բռնի տապալում կամ բռնություն են կիրառում սահմանադրական կարգը տապալելու նպատակով:

2. Արգելվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական նախադպրոցական, դպրոցական եւ այլ ուսումնական հաստատություններում, պետական այլ կազմակերպություններում կուսակցությունների ստորաբաժանումների տեղակայումը:

3. Արգելվում է Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա կուսակցությունների կամ դրանց ստորաբաժանումների, ինչպես նաեւ հիմնարկների ստեղծումը կամ գործունեությունը:

### **Հոդված 6. Պետությունը եւ կուսակցությունները**

1. Արգելվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց միջամտությունը կուսակցությունների գործունեությանը՝ բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի:

2. Կուսակցությունների անդամները, որոնք Հայաստանի Հանրապետության պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում պաշտոններ են զբաղեցնում, իրավունք չունեն իրենց ծառայողական (պաշտոնեական) դիրքն օգտագործելի հոգուտ կուսակցական շահերի: Նշված անձինք իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս կաշկանդված չեն կուսակցության որոշումներով:

3. Կուսակցություններին անդամակցելը կամ չանդամակցելը անձի իրավունքներն ու ազատությունները սահմանափակելու կամ պետության կողմից նրան որեւէ արտոնություն կամ առավելություն տրամադրելու հիմք չի հանդիսանում:

## **ԳԼՈՒԽ 2.**

### **ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ**

#### **Հոդված 7. Կուսակցությունների ստեղծումը**

1. Կուսակցությունը ձեւավորվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նախաձեռնությամբ՝ հիմնադիր համագումարի որոշմամբ:

2. Հիմնադիր համագումարը իրավազոր է, եթե դրան մասնակցում է առնվազն 100 հիմնադիր:

#### **Հոդված 8. Կուսակցության հիմնադիր համագումարի կողմից որոշումների ընդունումը**

1. Կուսակցության հիմնադիր համագումարը որոշումներ է ընդունում կուսակցության ստեղծման, կուսակցության ծրագրի ընդունման եւ կանոնադրության հաստատման, պետական գրանցման համար լիազորված անձի (անձանց), ղեկավար եւ վերահսկողություն իրականացնող մարմինների կազմավորման մասին, ինչպես նաեւ իր կազմից ընտրում է մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավար (կամ ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար):

2. Կուսակցության ստեղծման մասին որոշումն ընդունվում է կուսակցության հիմնադիր համագումարին ներկա առնվազն 100 հիմնադրի միաձայն որոշմամբ:

3. Կուսակցության ծրագրի եւ կանոնադրության հաստատման, պետական գրանցման համար լիազորված անձի (անձանց), ղեկավար եւ վերահսկողություն իրականացնող մարմինների ձեւավորման մասին որոշումներն ընդունվում են կուսակցության հիմնադիր համագումարին ներկա հիմնադիրների ձայների մեծամասնությամբ:

4. Հիմնադիր համագումարի կազմակերպիչները հիմնադիր համագումարի անցկացման օրվանից առնվազն մեկ ամիս առաջ <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում են կուսակցության հիմնադիր համագումարի անցկացման ժամանակի եւ վայրի մասին ծանուցում, ինչպես նաեւ կուսակցության կանոնադրության եւ ծրագրի նախագծերի հիմնական դրույթները:

### **Հոդված 9. Կուսակցության պետական գրանցման կարգը**

1. Կուսակցության՝ որպես իրավաբանական անձի իրավունակությունը ծագում է պետական գրանցման պահից:

2. Պետական գրանցման պահին կուսակցությունը պետք է ունենա ոչ պակաս, քան 800 անդամ, որոնք ներկայացնում են Երեւան քաղաքը կամ Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն 1/3-ը կամ Երեւան քաղաքը եւ Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն 1/4-ը, ինչպես նաեւ տարածքային ստորաբաժանումներ՝

1) Երեւան քաղաքում՝ առնվազն երեք ստորաբաժանում կամ

2) Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն 1/3-ում՝ յուրաքանչյուրում առնվազն մեկ ստորաբաժանում կամ

3) Երեւան քաղաքում եւ Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն 1/4-ում՝ յուրաքանչյուրում առնվազն մեկ ստորաբաժանում:

3. Կուսակցության պետական գրանցումը կատարում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը՝ Արդարադատության նախարարությունը (այսուհետ՝ պետական լիազոր մարմին):

4. Պետական գրանցման նպատակով կուսակցությունը պետական լիազոր մարմին է ներկայացնում.

- 1) կուսակցության կանոնադրության առնվազն երկու օրինակ,
- 2) հանրային կյանքի կազմակերպման հայեցակարգի վերաբերյալ կուսակցության մոտեցումներն արտացոլող ծրագրի առնվազն երկու օրինակ,
- 3) պետական գրանցման մասին դիմում՝ ստորագրված կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների կողմից՝ նրանցից յուրաքանչյուրի անձնագրային տվյալների եւ հաշվառման հասցեի նշումով,
- 4) հիմնադիր համագումարի արձանագրությունը, ինչպես նաև կուսակցության ստեղծման, մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարի (կամ ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի) ընտրության, տարածքային ստորաբաժանումների կազմավորման, դրանց գտնվելու վայրի, կանոնադրության հաստատման ու ծրագրային փաստաթղթերի ընդունման, պետական գրանցման համար լիազորված անձի (անձանց), ղեկավար եւ վերահսկողություն իրականացնող մարմինների կազմավորման մասին որոշումները,
- 5) պետական գրանցման պահին կուսակցության հիմնադիրների ցանկը, որը պետք է պարունակի անդամի անունը, ազգանունը, ստորագրությունը, նշում՝ համապատասխան տարածքային ստորաբաժանման վերաբերյալ.
- 6) հիմնադիր համագումարին մասնակցած հիմնադիրների անունները, ազգանունները, անձնագրերի պատճենները, ստորագրությունները.
- 7) կուսակցության ղեկավար մարմինների կազմի մասին տեղեկություններ (անուն, ազգանուն, անձնագրային տվյալներ, բնակության վայր),
- 8) կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի գտնվելու վայրի մասին տեղեկանք,
- 9) պետական գրանցման համար պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ,

10) տեղեկատվություն կուսակցության տարածքային ստորաբաժանումների վերաբերյալ:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված փաստաթղթերը պետական գրանցման համար ներկայացվում են կուսակցության հիմնադիր համագումարի անցկացման օրվանից ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում:

6. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու դեպքում պետական լիազոր մարմինը մեկամսյա ժամկետում գրանցում է կուսակցությունը կամ սույն օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում վերադարձնում է պետական գրանցման դիմումը կամ մերժում է կուսակցության պետական գրանցումը:

7. Կուսակցության պետական գրանցումից հետո երկշաբաթյա ժամկետում կուսակցության կանոնադրությունը, ծրագիրը համընդհանուր իրազեկման նպատակով ենթակա են հրապարակման՝ պետական լիազոր մարմնի պաշտոնական կայքում:

## **Հոդված 10. Կուսակցության պետական գրանցման դիմումը վերադարձնելը**

1. Պետական գրանցման համար սույն օրենքով սահմանված պահանջների չպահպանման դեպքում պետական լիազոր մարմինը վերադարձնում է պետական գրանցման դիմումը: Կուսակցության պետական գրանցման դիմումը վերադարձնելու մասին պետական լիազոր մարմնի որոշումը պետք է լինի պատճառաբանված՝ նշում պարունակելով սույն օրենքի այն դրույթների վերաբերյալ, որոնց պահանջները չեն պահպանվել:

2. Հայտնաբերված թերությունները շտկելու եւ պետական գրանցման դիմումը կուսակցության հիմնադիր համագումարի անցկացման օրվանից ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում կրկին պետական լիազոր մարմին ներկայացնելու դեպքում այն համարվում է ընդունված և պետական տուրք կրկին չի գանձվում:

3. Պետական գրանցման դիմումը վերադարձնելը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով:

### **Հոդված 11. Կուսակցության պետական գրանցումը մերժելը**

1. Պետական լիազոր մարմինը մերժում է կուսակցության պետական գրանցումը, եթե՝

1) կուսակցության կանոնադրության կամ ծրագրի դրույթները ուղղված են Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի բռնի տապալմանը կամ

2) կուսակցության հիմնադիրների թիվը չի համապատասխանում սույն օրենքի պահանջներին կամ կուսակցության հիմնադիր համագումարում որոշում չի ընդունվել կուսակցության ստեղծման կամ կուսակցության ծրագրի ընդունման կամ կանոնադրության հաստատման կամ ղեկավար կամ վերահսկողություն իրականացնող մարմինների կազմավորման մասին, ինչպես նաև ընտրված չէ մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավար (կամ ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար) կամ

3) կուսակցության պետական գրանցման դիմումը ներկայացվել է կուսակցության հիմնադիր համագումարի անցկացման օրվանից մեկ տարի անց:

2. Կուսակցության պետական գրանցումը մերժելու մասին պետական լիազոր մարմնի որոշումը պետք է լինի պատճառաբանված՝ հղում պարունակելով սույն օրենքի այն դրույթներին, որոնք մերժման հիմք են հանդիսացել:

3. Կուսակցության պետական գրանցման մերժումը, ինչպես նաև սույն օրենքով սահմանված ժամկետում չգրանցելը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով:

### **ԳԼՈՒԽ 3.**

### **ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**



## **Հողված 12. Կուսակցության անդամները**

1. Կուսակցությանն անդամակցությունը կամավոր է եւ անհատական:
2. Կուսակցության անդամներ կարող են լինել տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության գործունակ քաղաքացիները:
3. Կուսակցության հիմնադիրները կուսակցության պետական գրանցումից հետո օրենքի ուժով դառնում են կուսակցության անդամներ:
4. Յուրաքանչյուր անձ կարող է միաժամանակ լինել միայն մեկ կուսակցության հիմնադիր:
5. Կուսակցությանն անդամակցությունը կատարվում է քաղաքացու դիմումի հիման վրա՝ սույն օրենքին համապատասխան՝ կուսակցության կանոնադրությամբ նախատեսված կարգով:
6. Կուսակցության անդամներն իրավունք ունեն ընտրել եւ ընտրվել տվյալ կուսակցության ու նրա տարածքային ստորաբաժանումների ղեկավար եւ վերահսկողություն իրականացնող մարմիններում, ներկա գտնվել կուսակցության համագումարի նիստերին, ծանոթանալ կուսակցության մարմինների արձանագրություններին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները, տեղեկատվություն ստանալ կուսակցության ու նրա ղեկավար մարմինների գործունեության վերաբերյալ, ստանալ փաստաթղթերի պաճեններ՝ կուսակցության կանոնադրության փոփոխությունների, գույքի կառավարումից ստացած դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաեւ ստանալ նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացությունը, բողոքարկել կուսակցության մարմինների որոշումներն ու գործողությունները, կամովին դադարեցնել իրենց անդամակցությունը:
7. Կուսակցության անդամները կուսակցության կանոնադրությանը համապատասխան կարող են ունենալ այլ իրավունքներ եւ պարտականություններ:

8. Իրենց կանոնադրական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կուսակցության անդամները կարող են կանոնադրությամբ նախատեսված կարգով ենթարկվել կարգապահական պատասխանատվության, ընդհուպ՝ կուսակցությունից հեռացման:

### **Հոդված 13. Կուսակցությանն անդամակցելու արգելքները**

1. 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կուսակցության հիմնադիր կամ անդամ չեն կարող լինել դատավորները, դատախազները, քննիչները:

2. Օրենքով կարող են սահմանվել զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների կողմից կուսակցություն ստեղծելու և որևէ կուսակցության անդամագրվելու իրավունքի սահմանափակումներ:

3. Սահմանադրության համաձայն՝ իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում կուսակցության անդամ չեն կարող լինել Հանրապետության նախագահը, Մարդու իրավունքների պաշտպանը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամները, Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի անդամները, Հաշվեքննիչ պալատի անդամները, Կենտրոնական բանկի խորհրդի անդամները:

### **Հոդված 14. Կուսակցության անվանումը**

1. Կուսակցության անվանումը ներառում է «կուսակցություն» բառը:

2. Կուսակցության անվանումը կամ հապավումը չպետք է նույնական կամ շփոթելու աստիճան նման լինի գրանցված կուսակցությունների նախկին անվանումներին, գրանցված կուսակցությունների ու այլ հասարակական միավորումների, տվյալ կուսակցության գրանցմանը նախորդող հինգ տարվա ընթացքում «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի

Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով գործունեությունը արգելված կուսակցությունների, ինչպես նաև գրանցման գործընթացում գտնվող կուսակցությունների անվանումներին կամ դրանց հապավումներին:

3. Կուսակցության անվանման մեջ հանրահայտ ֆիզիկական անձի լրիվ կամ կրճատ անունը կարող է օգտագործվել միայն այդ անձի, իսկ հանրահայտ ֆիզիկական անձի մահացած լինելու դեպքում՝ նրա ժառանգի գրավոր համաձայնությամբ: Ժառանգ չունենալու դեպքում մահացած հանրահայտ անձի անունը կարող է օգտագործվել Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

4. Կուսակցության անվանման մեջ չի թույլատրվում օգտագործել պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների անվանումները կամ դրանց շփոթելու աստիճան նման անվանումներ:

5. Կուսակցության անվանումը չի կարող պարունակել վիրավորական կամ գրպարտչական բնույթի բառեր կամ այլ արտահայտություններ:

6. Կուսակցության անվանումը չպետք է խախտի քաղաքացիների եւ իրավաբանական անձանց մտավոր սեփականության իրավունքը:

7. Կուսակցություններ չհանդիսացող իրավաբանական անձինք, ինչպես նաև դրանց առանձնացված ստորաբաժանումները եւ հիմնարկները չեն կարող իրենց անվանման մեջ օգտագործել «կուսակցություն» բառը:

8. Կուսակցության տարածքային ստորաբաժանումները օգտագործում են կուսակցության անվանումը՝ նշելով համապատասխան տարածքը:

### **Հոդված 15. Կուսակցության խորհրդանշանը եւ այլ խորհրդանիշերը**

1. Կուսակցությունները կարող են ունենալ խորհրդանշան եւ այլ խորհրդանիշեր, որոնց նկարագրությունը սահմանվում է կուսակցության կանոնադրությամբ:

2. Կուսակցության խորհրդանշանը եւ այլ խորհրդանիշերը չեն կարող նույնական կամ շփոթելու աստիճան նման լինել Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության դրոշին կամ զինանշանին, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաեւ գործող կուսակցությունների ու հասարակական այլ միավորումների, միջազգային կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության տարածքում արգելված կազմակերպությունների կամ կուսակցությունների խորհրդանշաններին եւ այլ խորհրդանիշերին:

3. Կուսակցության խորհրդանշանը և այլ խորհրդանիշերը չեն կարող պարունակել վիրավորական կամ զրպարտչական բնույթի բառեր կամ այլ արտահայտություններ:

4. Կուսակցության խորհրդանշանը եւ այլ խորհրդանիշերը չպետք է խախտեն քաղաքացիների եւ իրավաբանական անձանց մտավոր սեփականության իրավունքը:

### **Հոդված 16. Կուսակցության կանոնադրությունը**

1. Կուսակցությունը, նրա կառուցվածքային եւ տարածքային ստորաբաժանումները գործում են կուսակցության կանոնադրության հիման վրա, որի դրույթները չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, միջազգային պայմանագրերին, օրենքներին և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերին:

2. Կանոնադրությունում սահմանվում են կուսակցության՝

1) անվանումը, ներառյալ՝ անվանման հապավումը, ինչպես նաեւ խորհրդանշանի, այլ խորհրդանիշերի նկարագրությունը (եթե դրանք առկա են).

2) կուսակցությանն անդամակցելու եւ անդամությունը դադարեցնելու պայմաններն ու կարգը.

3) անդամների իրավունքները եւ պարտականությունները,

4) կառուցվածքը, ղեկավար եւ վերահսկողություն իրականացնող մարմինների ձեւավորման եւ կազմալուծման կարգը, իրավունքները և պարտականությունները եւ դրանց ժամկետները,

5) կուսակցության համագումարին մասնակցող պատվիրակների ընտրության կարգը,

6) տարածքային ստորաբաժանումների ստեղծման եւ գործունեության դադարեցման կարգը.

7) տարածքային ստորաբաժանումների ղեկավար եւ վերահսկողություն իրականացնող մարմինների ձեւավորման եւ կազմալուծման կարգը, իրավունքները և պարտականությունները եւ դրանց ժամկետները.

8) կանոնադրությունում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու կարգը.

9) կուսակցության անդամների նկատմամբ կիրառվող կարգապահական պատասխանատվության միջոցները, դրանց կիրառման հիմքերն ու կարգը, դրանք կիրառող իրավասու մարմինները.

10) դրամական միջոցների եւ գույքի ձեռքբերման աղբյուրները, գույքը կառավարելու՝ կուսակցության տարածքային եւ կառուցվածքային ստորաբաժանումների իրավունքները:

3. Կուսակցության կանոնադրությամբ սահմանվում են նաև Ազգային ժողովի ընտրություններին և Երևան, Գյումրի, Վանաձոր քաղաքների ավագանիների ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների ձևավորման կարգը: Ընտրական ցուցակների ձևավորման ժամանակ առնվազն

հաշվի են առնվում կուսակցությունների անդամների, ինչպես նաև տարածքային ստորաբաժանումների ներկայացրած առաջարկությունները:

4. Կուսակցության կանոնադրությունը կարող է պարունակել նաև նրա գործունեությանը վերաբերող այլ դրույթներ:

### **Հոդված 17. Կուսակցության ղեկավար մարմինները**

1. Կուսակցության բարձրագույն ղեկավար մարմինը կուսակցության համագումարն է (համագումար, ժողով, համաժողով, վեհաժողով և այլն), որը հրավիրվում է կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կողմից կուսակցության կանոնադրությամբ նախատեսված ժամկետում, բայց ոչ ուշ, քան 4 տարին մեկ անգամ: Կուսակցության համագումարում ընտրվում են կուսակցության կանոնադրությամբ սահմանված մարմինները, որոնք հաշվետու են համագումարին:

2. Կուսակցության համագումարն իրավասու է քննարկել իր որոշմամբ սահմանված ցանկացած հարց, որի վերաբերյալ որոշում կայացնելու իրավունքը օրենքով կամ կանոնադրությամբ վերապահված չէ այլ մարմնի:

3. Կուսակցության համագումարի բացառիկ իրավասություններն են՝

1) կուսակցության կանոնադրության հաստատումը եւ ծրագրի ընդունումը, դրանցում փոփոխություններ եւ լրացումներ կատարելը, բացառությամբ սույն օրենքի փոփոխությամբ պայմանավորված փոփոխությունների և լրացումների,

2) ղեկավար եւ վերահսկողություն իրականացնող մարմինների կազմավորումը,

3) մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարի ընտրությունը,

4) կուսակցության վերակազմակերպումը:

4. Կուսակցության անունից այլ մարմինների եւ անձանց հետ հարաբերություններում հանդես է գալիս կուսակցության մշտապես գործող

ղեկավար մարմինը, իսկ կոլեգիալ ղեկավար մարմնի դեպքում՝ կոլեգիալ մարմնի ղեկավարը:

5. Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմինը.

1) հաստատում է կուսակցության տարեկան բյուջեն, եթե այդ իրավասությունը կուսակցության կանոնադրությամբ վերապահված չէ կուսակցության համագումարին,

2) հաստատված տարեկան բյուջեի հիման վրա հաստատում է կուսակցության ծախսերի նախահաշիվը,

3) կուսակցության անունից կնքում է քաղաքացիաիրավական գործարքներ,

4) իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունում է սույն օրենքի փոփոխությամբ պայմանավորված կուսակցության կանոնադրության և ծրագրի փոփոխությունները և լրացումները,

5) որոշում է կայացնում կուսակցության լուծարման մասին, եթե համագումարը իրավազոր չի եղել,

6) իրականացնում է օրենքով եւ կանոնադրությամբ վերապահված այլ իրավունքներ:

### **Հոդված 18. Կուսակցության համագումարում որոշումների ընդունման կարգը**

1. Կուսակցության համագումարին ձայնի իրավունքով մասնակցում են կուսակցության կանոնադրությամբ սահմանված կարգով ընտրված ներկայացուցիչները՝ պատվիրակները:

2. Կուսակցության համագումարն իրավազոր է, եթե նրան ներկա են համագումարի պատվիրակների ընդհանուր թվի առնվազն կեսը, բայց ոչ պակաս, քան 100 պատվիրակ:

3. Կուսակցության համագումարի որոշումները, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի, ընդունվում են համագումարին ներկա պատվիրակների ձայների մեծամասնությամբ:

4. Կուսակցության կանոնադրության հաստատման եւ ծրագրի ընդունման, դրանցում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու, բացառությամբ սույն օրենքի փոփոխությամբ պայմանավորված փոփոխությունների և լրացումների, ղեկավար եւ վերահսկողություն իրականացնող մարմինների կազմավորման, մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարի ընտրության, կուսակցության վերակազմակերպման, լուծարման մասին որոշումներն ընդունվում են ընտրված պատվիրակների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

#### **Հոդված 19. Կուսակցության տարածքային ստորաբաժանումները**

1. Կուսակցությունների տարածքային ստորաբաժանումները ստեղծվում են տարածքային հատկանիշով՝ Հայաստանի Հանրապետության մարզերում եւ Երեւան քաղաքի վարչական շրջաններում:

2. Կուսակցության ղեկավար մարմիններն ու նրա տարածքային ստորաբաժանումները կարող են գտնվել միայն Հայաստանի Հանրապետության տարածքում: Այլ պետություններում կուսակցությունը կարող է ունենալ միայն ներկայացուցչություններ:

#### **ԳԼՈՒԽ 4.**

#### **ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ**

**Հոդված 20. Կուսակցության, կուսակցությունների դաշինքի բացառիկ իրավունքները**

1. Կուսակցությունները եւ կուսակցությունների դաշինքները բացառիկ իրավունք ունեն օրենքով սահմանված կարգով առաջադրելու Ազգային ժողովի



պատգամավորի, ինչպես նաև Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների ավագանու անդամի թեկնածուներ:

## **Հոդված 21. Կուսակցության իրավունքները**

1. Կուսակցությունն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով՝

1) մասնակցել պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների, ինչպես նաեւ հանրաքվեների նախապատրաստմանն ու անցկացմանը.

2) «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ընտրական գործընթացում հավասար եւ ոչ խտրական պայմաններով օգտվել պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների հիմնադրած զանգվածային լրատվության միջոցներից.

3) հիմնադրել զանգվածային լրատվության միջոցներ եւ հրատարակչություններ,

4) ազատորեն տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին, քարոզել իր գաղափարներն ու նպատակները.

5) կազմակերպել եւ անցկացնել խաղաղ, առանց զենքի հավաքներ.

6) առանց իրավաբանական անձ կազմավորելու այլ կուսակցությունների հետ ստեղծել դաշինքներ (միավորումներ).

7) հաստատել եւ պահպանել միջազգային կապեր այլ պետությունների կուսակցությունների եւ հասարակական միավորումների, միջազգային կազմակերպությունների հետ, դառնալ միջազգային միությունների անդամ.

8) իրականացնել օրենքով չարգելված այլ գործունեություն:

2. Կուսակցությունն իրավունք ունի իր կանոնադրային նպատակներին համապատասխան տնօրինել իր գույքը եւ գործունեության արդյունքները:

3. Կուսակցությունն իրավունք չունի լինել առետրային իրավաբանական անձի հիմնադիր կամ մասնակից, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

4. Ազգային ժողովի ընտրություններում կուսակցությունների դաշինքները կարող են կազմավորվել առնվազն երկու կուսակցության կողմից:

5. Կուսակցությունների համար երաշխավորվում է ընդդիմադիր գործունեություն իրականացնելու ազատություն, այդ թվում՝

ա) հրապարակայնորեն ներկայացնել իր դիրքորոշումը պետական եւ հասարակական կյանքի տարբեր հարցերի վերաբերյալ.

բ) պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին, պաշտոնատար անձանց ներկայացնել անհատական և կոլեկտիվ հանրագրեր, որոնք համապատասխան մարմինների և պաշտոնատար անձանց կողմից օրենքով սահմանված կարգով ենթակա են քննարկման:

## **Հոդված 22. Կուսակցության պարտականությունները**

1. Կուսակցությունը պարտավոր է՝

1) պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը եւ օրենքները,

2) յուրաքանչյուր տարի <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել գույքի օգտագործման վերաբերյալ հաշվետվություն՝ նշելով դրա կազմավորման աղբյուրները:

2. Ընտրություններին մասնակցող կուսակցությունները ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար օրենքով սահմանված ժամկետի ավարտից հետո 5 օրվա ընթացքում Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացնում կուսակցության

(կուսակցությունների դաշինքները՝ դրանցում ընդգրկված կուսակցությունների) գույքի եւ եկամուտների մասին հայտարարագիր:

### **Հոդված 23. Կուսակցության գույքը**

1. Կանոնադրությամբ եւ ծրագրով սահմանված նպատակների իրականացման համար կուսակցությունը սեփականության կամ այլ գույքային իրավունքով կարող է ունենալ ցանկացած գույք: Կուսակցությունը սեփականության իրավունքով չի կարող ունենալ այնպիսի գույք, որը հանված է շրջանառությունից:

2. Կուսակցության գույքը գոյանում է՝

1) կուսակցությանն անդամագրվելու համար միանվագ կատարվող վճարներից (մուտքի վճարներից), սահմանված չափով պարբերաբար կատարվող վճարներից (անդամավճարներից), եթե դրանք սահմանված են կուսակցության կանոնադրությամբ.

2) սույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված նվիրատվություններից.

3) սույն օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված կարգով բյուջետային ֆինանսավորումից.

4) սույն օրենքով սահմանված գործնեությունից ստացված եկամուտներից:

3. Մեկ ֆիզիկական անձի կողմից անդամավճարի առավելագույն չափը տարեկան չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:

4. Կուսակցության անդամը սեփականության իրավունք չունի կուսակցությանը պատկանող գույքի նկատմամբ: Կուսակցության գույքի նվիրատվությունը արգելվում է:

5. Կուսակցությունը իր գույքով պատասխանատվություն չի կրում իր անդամների պարտավորությունների համար, իսկ կուսակցության անդամը իր

գույքով պատասխանատվություն չի կրում կուսակցության պարտավորությունների համար:

#### **Հոդված 24. Կուսակցություններին կատարվող նվիրատվությունները**

1. Կուսակցություններն իրավունք ունեն գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների, ներառյալ՝ վարկերի, փոխառությունների, երրորդ անձանց կողմից կուսակցության պարտքի մարման տեսքով նվիրատվություններ ստանալու ֆիզիկական եւ իրավաբանական անձանցից, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի:

2. Կուսակցությանը տրվող նվիրատվության, ինչպես նաեւ կուսակցության համար կատարված աշխատանքների ու ծառայությունների (այսուհետ՝ նվիրատվություն) ընդհանուր չափը՝ դրամական արտահայտությամբ, մեկ տարվա ընթացքում չի կարող գերազանցել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի միլիոնապատիկը, այդ թվում՝

1) մեկ առեւտրային կազմակերպության կողմից՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհազարապատիկը.

2) մեկ ոչ առեւտրային կազմակերպության կողմից՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը.

3) մեկ ֆիզիկական անձի կողմից՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհազարապատիկը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում մեկ անձի կողմից կուսակցությանը նվիրված անշարժ գույքի արժեքը չի կարող գերազանցել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհազարապատիկը: Կուսակցությանը նվիրատվության կարգով տրվող անշարժ գույքը չի կարող օտարվել նվիրատվության օրվանից առնվազն հինգ տարվա ընթացքում:

4. Նվիրատվություններ չեն թույլատրվում՝

1) բարեգործական կամ կրոնական կազմակերպություններից, ինչպես նաև դրանց մասնակցությամբ կազմակերպություններից.

2) պետական եւ համայնքային բյուջեներից եւ (կամ) արտաբյուջետային միջոցներից, բացառությամբ սույն օրենքի 26-րդ հոդվածի համաձայն կատարվող ֆինանսավորման.

3) պետական եւ համայնքային ոչ առետրային կազմակերպություններից եւ պետական ու համայնքային մասնակցությամբ առետրային կազմակերպություններից.

4) օտարերկրյա պետություններից, օտարերկրյա քաղաքացիներից ու իրավաբանական անձանցից, ինչպես նաև օտարերկրյա մասնակցությամբ իրավաբանական անձանցից, եթե օտարերկրյա մասնակցի բաժնետոմսերը, փայլը, բաժնեմասը տվյալ իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք, փայտահավաք) կապիտալում 30 տոկոսից ավելի է.

5) միջազգային կազմակերպություններից,

6) քաղաքացիություն չունեցող անձանցից

7) անանուն անձանցից:

5. Սույն հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով սահմանված չափը գերազանցող նվիրատվությունների ստացման դեպքում կուսակցությունը պարտավոր է ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, նվիրատվության սահմանված չափը գերազանցող մասը կամ նվիրատվությունն ամբողջությամբ, իսկ սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին եւ 6-րդ կետերով չթույլատրված նվիրատվությունները ամբողջությամբ վերադարձնել նվիրատուին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցել պետական բյուջե:

6. Սույն հոդվածի 4-րդ մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 7-րդ կետերով չթույլատրված նվիրատվությունների ստացման դեպքում կուսակցությունը

պարտավոր է ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, դրանք փոխանցել պետական բյուջե:

7. Նվիրատվություն կատարող ֆիզիկական անձինք պարտավոր են նշել իրենց անունը, ազգանունը, իսկ իրավաբանական անձինք՝ իրավաբանական անձանց միջեւ անկանխիկ հաշվարկի կանոններով պահանջվող բոլոր տեղեկությունները:

8. Կուսակցությանը օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի դրամական հատկացումները կատարվում են անկանխիկ:

9. Սույն հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերով սահմանված համապատասխան նվիրատվությունների ստացման եւ դրանք օրենքով սահմանված ժամկետներում համապատասխանաբար պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու դեպքում կուսակցությունը օրենքով սահմանված կարգով ենթակա է պատասխանատվության:

## **ԳԼՈՒԽ 5.**

### **ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ**

#### **Հոդված 25. Կուսակցություններին հանրային աջակցության ձեւերը**

1. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները օրենքով սահմանված կարգով բոլոր կուսակցություններին հավասար եւ ոչ խտրական պայմաններով ցուցաբերում են հետեւյալ աջակցությունը.

1) ապահովում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությամբ հիմնադրված զանգվածային լրատվության միջոցներից օգտվելու հնարավորությունը,

2) կուսակցություններին տրամադրում են իրենց պատկանող շինություններ, կապի միջոցներ, որոնցից օգտվելու առաջնահերթ իրավունք ունեն Ազգային ժողովի ընտրություններում մանդատների բաշխմանը մասնակցած կուսակցությունները,

3) նախընտրական քարոզչություն իրականացնելու համար կուսակցություններին ու նրանց տարածքային ստորաբաժանումներին Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով ապահովում են համապատասխան հնարավորություններով:

2. Պետական մարմինները սույն օրենքի 26-րդ հոդվածով սահմանված կարգով ֆինանսավորում են կուսակցությունների գործունեությունը:

### **Հոդված 26. Կուսակցությունների պետական ֆինանսավորումը**

1. Կուսակցությունների պետական ֆինանսավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին: Այդ ծախսերը արտացոլվում են պետական բյուջեում առանձին հոդվածով:

2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված՝ կուսակցությունների ֆինանսավորման միջոցների ընդհանուր ծավալը չի կարող պակաս լինել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի 0,04-ապատիկի եւ Ազգային ժողովի վերջին ընտրությունների ժամանակ ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիների ընդհանուր թվի արտադրյալից:

3. Պետական բյուջեից միջոցներ հատկացվում են այն կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին), որի ընտրական ցուցակն Ազգային ժողովի վերջին ընտրությունների ժամանակ ստացել է քվեարկությանը մասնակցած բոլոր կուսակցությունների ընտրական ցուցակների օգտին կողմ տրված ձայների ընդհանուր թվի եւ անճշտությունների թվի գումարի առնվազն 3 տոկոսը:

4. Պետական բյուջեից կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) հատկացվող միջոցները կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) միջեւ բաշխվում են Ազգային ժողովի վերջին ընտրություններում նրանց ստացած ձայներին համամասնորեն:

5. Նշված միջոցները կուսակցությունների ընտրական դաշինքին մասնակցող կուսակցությունների միջեւ բաշխվում են հավասարապես, եթե այլ բան նախատեսված չէ կուսակցությունների ընտրական դաշինքի որոշմամբ:

6. Կուսակցության վերակազմակերպման, լուծարման մասին որոշում ընդունելու, գործունեության արգելման մասին սահմանադրական դատարանի որոշումն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից պետական բյուջեի միջոցների հատկացումը դադարեցվում է:

## **ԳԼՈՒԽ 6.**

### **ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՌԻԴԻՏԸ**

#### **Հոդված 27. Կուսակցությունների հաշվետվությունները**

1. Կուսակցությունները պետական մարմիններին ֆինանսական ու հաշվապահական հաշվետվություններ են ներկայացնում իրավաբանական անձանց համար օրենսդրությամբ սահմանված կարգով եւ ժամկետներում:

2. Կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ, զանգվածային լրատվության միջոցներով հրապարակել հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների եւ ծախսերի, ինչպես նաեւ գույքի մասին հաշվետվությունը (այսուհետ՝ հաշվետվություն) եւ օրենքով նախատեսված դեպքերում դրա վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը, ինչպես նաեւ սահմանված կարգով այն տեղադրել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

3. Կուսակցությունն իր հաշվետվությունը զանգվածային լրատվության միջոցով հրապարակելուց եւ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելուց հետո պարտավոր է հաշվետու տարվան հաջորդող ապրիլի 1-ից ոչ ուշ հաշվետվությունը եւ դրա հրապարակման փաստը վկայող ապացույցը ներկայացնել Կենտրոնական



ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն (այսուհետ՝  
Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն):

4. Հաշվետու տարվա ընթացքում կուսակցության հաշվետվությունը պետք է  
տվյալներ պարունակի կուսակցության հաշվում մուտք արված միջոցների  
աղբյուրների եւ ծավալի, այդ միջոցների ծախսման, ինչպես նաեւ ունեցած գույքի  
մասին՝ նշելով դրա արժեքը:

5. Կուսակցության ստացած նվիրատվությունների աղբյուրը՝ անկախ  
արժեքից, նշվում է կուսակցության հաշվետվությունում:

6. Կուսակցության կողմից նախընտրական քարոզչության  
նախապատրաստման եւ իրականացման համար ծախսված միջոցների հաշվառումը  
կատարվում է առանձին:

7. Հաշվետվության հրապարակման եւ ներկայացման կարգը (ներառյալ՝  
հաշվետվության ձեւը) սահմանում է Հայաստանի Հանրապետության  
կառավարությունը:

### **Հոդված 28. Կուսակցությունների հաշվետվությունների աուդիտը**

1. Այն կուսակցությունները, որոնց ակտիվների արժեքը գերազանցել է  
օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկը,  
պարտավոր են հաշվետվությունները հրապարակել միայն աուդիտի ենթարկվելուց  
հետո՝ աուդիտորական եզրակացության հետ:

2. Այն կուսակցությունները, որոնց ակտիվների արժեքը սահմանված  
նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկը գերազանցելը  
պայմանավորված է եղել հաշվետու տարում կուսակցության հաշվեկշռում առկա  
անշարժ եւ շարժական գույքի արժեքով, եւ կուսակցությունն այդ կապակցությամբ  
արդեն մեկ անգամ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությանը ներկայացրել է  
աուդիտորական եզրակացություն, հաջորդող հաշվետու տարիներին ազատվում է  
աուդիտորական եզրակացություն ներկայացնելու պարտականությունից, եթե

նախորդ հաշվետու տարվա համեմատությամբ նրա հաշվեկշռում անշարժ եւ շարժական գույքի մասով փոփոխություններ տեղի չեն ունեցել: Կուսակցության հաշվեկշռում անշարժ եւ շարժական գույքի մասով փոփոխությունների դեպքում կուսակցությունը պարտավոր է հաշվետվությունը ներկայացնել սույն օրենքով սահմանված կարգով աուդիտորական եզրակացության հետ, եթե հաշվետու տարում իրականացրած բոլոր գործարքների գինը գերազանցել է սահմանված նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկը:

3. Սույն օրենքով սահմանված կարգով պետական բյուջեից ֆինանսավորում ստացած կուսակցությունները պարտավոր են հաշվետվությունները հրապարակել միայն աուդիտի ենթարկվելուց հետո՝ աուդիտորական եզրակացության հետ, եթե պետական բյուջեից ֆինանսավորումը հաշվետու տարում գերազանցել է նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկը:

## **ԳԼՈՒԽ 7.**

### **ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

#### **Հոդված 29. Կուսակցությունների միջազգային գործունեությունը**

1. Կուսակցությունն իրավունքի ունի կապեր հաստատել եւ պահպանել օտարերկրյա պետությունների քաղաքական կուսակցությունների, հասարակական միավորումների, միջազգային կազմակերպությունների հետ, կնքել համագործակցության մասին համաձայնագրեր եւ իրականացնել այլ միջոցառումներ, որոնք չեն հակասում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, միջազգային պայմանագրերին եւ օրենքներին:

2. Կուսակցություններն իրավունք ունեն անդամակցել միջազգային միությունների :

## **ԳԼՈՒԽ 8.**

**ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

**Հոդված 30. Կուսակցությունների գործունեության նկատմամբ  
ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինը**

1. Կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնում է Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը:

2. Կուսակցության հրապարակած եւ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությանը ներկայացրած հաշվետվության հավաստիությունը ստուգելու համար վերջինիս պահանջի դեպքում կուսակցությունը պարտավոր է հինգ օրվա ընթացքում տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն կուսակցության դրամարկղային եւ բանկային մուտքերի եւ ելքերի վերաբերյալ, ներկայացնել նախնական հաշվապահական հաշվառման եւ ներկայացրած հաշվետվության հավաստիությունը ստուգելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր:

**ԳԼՈՒԽ 9.**

**ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ, ԱՐԳԵԼՈՒՄԸ,  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ**

**Հոդված 31. Կուսակցության գործունեության կասեցման եւ արգելման  
կարգը**

1. Կուսակցության գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել Սահմանադրական դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

2. Կուսակցության գործունեության կասեցման կամ արգելման հարցով սույն օրենքով նախատեսված հիմքերով Սահմանադրական դատարան կարող են դիմել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը եւ Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

**Հոդված 32. Կուսակցության գործունեության կասեցումը**

1. Կուսակցության գործունեությունը կարող է կասեցվել, եթե

1) կուսակցությունն իր գործունեության ընթացքում թույլ է տվել օրենքի կոպիտ խախտում կամ

2) կուսակցությունը ինքնուրույն կամ կուսակցությունների դաշինքի կազմում կամ այլ կուսակցության ընտրական ցուցակի կազմում երկու անգամ անընդմեջ չի մասնակցել Ազգային ժողովի կամ Երևան, Գյումրի, Վանաձոր քաղաքների ավագանիների ընտրություններին:

2. Սույն հոդվածի 1-ին մասի իմաստով օրենքի կոպիտ խախտում է համարվում՝

1) կուսակցության կողմից նվիրատվությունների տնօրինման կամ կուսակցության տարեկան հաշվետվությունների հրապարկման կամ օրենքով սահմանված փաստաթղթերը տրամադրելու՝ օրենքով սահմանված կարգը խախտելը եւ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված կարգով պատասխանատվության ենթարկվելուց հետո՝ երեսնօրյա ժամկետում խախտումը չվերացնելը կամ

2) կուսակցության հիմնադրման կամ պետական գրանցման ժամանակ օրենքի այնպիսի խախտում թույլ տալը, որը, եթե հայտնի լիներ պետական գրանցման պահին, կուսակցությունը չէր գրանցվի:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով կասեցման ժամանակահատվածում կուսակցությանն արգելվում է իրականացնել ցանկացած գործունեություն, բացառությամբ այն գործողությունների, որոնք անհրաժեշտ են կասեցման հիմք հանդիսացող խախտումները վերացնելու համար եւ կուսակցության՝ որպես իրավաբանական անձի բնականոն գործունեությունը ապահովելու համար:

4. Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված վարչական իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելիս գրավոր նախազգուշացնում է, որ կուսակցության գործունեությունը կարող է կասեցվել երեսնօրյա ժամկետում խախտումը չվերացնելու դեպքում:

5. Վարչական պատասխանատվության ենթարկելուց հետո երեսնօրյա ժամկետում խախտումը չվերացնելու դեպքում Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը այդ մասին անհապաղ տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին և Հայաստանի Հանրապետության կառավարությանը:

6. Պետական լիազոր մարմինը Կառավարությանը անհապաղ տեղեկացնում է կուսակցության հիմնադրման կամ պետական գրանցման ժամանակ օրենքի այնպիսի խախտման մասին, որը եթե հայտնի լիներ պետական գրանցման պահին, կուսակցությունը չէր գրանցվի:

7. Կուսակցության գործունեությունը կասեցվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի որոշմամբ:

8. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքերով կուսակցության կողմից կասեցման հիմքերի վերացման վերաբերյալ ապացույցները ներկայացվում են պետական լիազոր մարմնին, որը գնահատում է կասեցման հիմք հանդիսացող խախտումները վերացված լինելու հանգամանքը: Պետական լիազոր մարմինը կասեցման հիմք հանդիսացող խախտումները վերացված լինելու կամ դրանց առկայության մասին եզրակացությունը ներկայացնում է Սահմանադրական դատարան դիմած մարմնին: Կուսակցության գործունեությունը վերսկսվում է կասեցման հիմք հանդիսացող խախտումները վերացնելու դեպքում:

9. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքում կուսակցության գործունեությունը կասեցվում է մեկ տարի ժամկետով: Կուսակցության գործունեությունը վերսկսելուց հետո Ազգային ժողովի, Երևան, Գյումրի, Վանաձոր քաղաքների ավագանիների հաջորդող ընտրություններին չմասնակցելու դեպքում կուսակցության գործունեությունը կրկին կասեցվում է: Նշված ժամանակահատվածում կուսակցությունը չի կարող իրականացնել որևէ գործունեություն, այդ թվում՝ ստանալ սույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված որևէ նվիրատվություն, բացառությամբ անդամավճարներ հավաքագրելու, պայմանագրային, այդ թվում՝ աշխատանքային պարտավորությունները կատարելու, ինչպես նաև հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարումներ վճարելու հետ կապված գործողությունների:

### **Հոդված 33. Կուսակցության գործունեության արգելումը**

1. Սահմանադրության 46-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն արգելման ենթակա է այն կուսակցությունների գործունեությունը, որոնք քարոզում են սահմանադրական կարգի բռնի տապալում կամ բռնություն են կիրառում սահմանադրական կարգը տապալելու նպատակով:

2. Կուսակցության գործունեության արգելումը հիմք չէ այդ կուսակցության առաջադրմամբ ընտրված պատգամավորի, Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանու անդամի լիազորությունները դադարեցնելու համար:

3. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշմամբ կուսակցության գործունեությունը արգելելու դեպքում կուսակցության գործունեությունը համարվում է դադարեցված, եւ այն ենթակա է լուծարման:

### **Հոդված 34. Կուսակցության վերակազմակերպումը**

1. Կուսակցությունը կարող է կուսակցության համագումարի՝ սույն օրենքով սահմանված կարգով ընդունված որոշմամբ վերակազմակերպվել (միաձուլվել, միանալ, բաժանվել կամ առանձնանալ) այլ կուսակցության:

2. Կուսակցության վերակազմակերպման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի կանոններին համապատասխան:

### **Հոդված 35. Կուսակցության լուծարումը եւ լուծարման հետեւանքները**

1. Կուսակցությունը լուծարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով եւ օրենքով սահմանված կարգով:

2. Կուսակցության լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է կուսակցության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե: Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում

կուսակցության լուծարումից հետո մնացած գույքը փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը:

3. Կուսակցությունը կարող է դադարեցնել իր գործունեությունը լուծարման միջոցով՝ կուսակցության համագումարի որոշմամբ:

4. Եթե կուսակցության լուծարման համար հրավիրված համագումարն իրավազոր չէ, կուսակցության լուծարման մասին որոշումն ընդունում է կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմինը: Իսկ կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի իրավազոր չլինելու դեպքում կուսակցությունը լուծարվում է կուսակցության հիմնադիրներից մեկի որոշմամբ: Այս դեպքում կուսակցության լուծարման մասին որոշումը համարվում է ընդունված, եթե որոշումը կայացնելու օրվանից երեք ամսվա ընթացքում կուսակցության համագումարը կամ մշտապես գործող ղեկավար մարմինը այլ որոշում չի կայացրել:

5. Եթե Սահմանադրական դատարանի որոշմամբ արգելվել է կուսակցության գործունեությունը, կուսակցության նկատմամբ սկսվում է լուծարման գործընթաց: Այս դեպքում լուծարային հանձնաժողովի իրավասություններն իրականացնում է Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից ստեղծված հանձնաժողովը:

## **ԳԼՈՒԽ 10.**

### **ԵԶՐԱՓՈՒԿ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

#### **Հոդված 36. Եզրափակիչ եւ անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2017 թվականի ապրիլի 1-ից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-410-Ն օրենքը բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի:

3. «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-410-Ն օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասը Հանրապետության նախագահի մասով ուժը կորցնում է նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

4. Սույն օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները Հանրապետության նախագահի, Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի անդամների, Հաշվեքննիչ պալատի անդամների և Կենտրոնական բանկի խորհրդի անդամների մասով ուժի մեջ են մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

5. Սույն օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

6. Կուսակցության պետական գրանցման համար մինչև 2017 թվականի փետրվարի 1-ը ներկայացված դիմումների վրա տարածվում են «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-410-Ն օրենքով սահմանված պետական գրանցման մասին դրույթները: Եթե կուսակցության պետական գրանցման համար 2017 թվականի փետրվարի 1-ից մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ներկայացված դիմումները չեն համապատասխանում սույն օրենքով սահմանված պահանջներին, ապա պետական գրանցում իրականացնող մարմինը դիմումը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում որոշում է կայացնում դիմումը վերադարձնելու մասին՝ նշելով սույն օրենքի այն դրույթները, որոնց չի համապատասխանում պետական գրանցման դիմումը: Սույն օրենքի պահանջներին չհամապատասխանելու հիմքով վերադարձված դիմումները հիմնադիր համագումարի անցկացման օրվանից մեկ տարվա ընթացքում կրկին ներկայացվելու դեպքում պետական տուրք չի գանձվում:



**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**  
**«ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ**

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)
	1	2	3
1	ՀՀ ԱԺ Հայ ազգային կոնգրես խմբակցություն, ԱԺ պատգամավորներ Լևոն Զուրաբյան, Հրանտ Բագրատյան, 2016-12-02 թիվ 02/10.7/19876-16 գրություն	1. 9-րդ հոդվածի 2-րդ մասում «1000» թիվը փոխարինել «500» թվով:	<b>Ընդունվել է մասնակի.</b> 9-րդ հոդվածի 2-րդ մասում «1000» թիվը փոխարինել «800» թվով:
		2. 9-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետը հանել:	<b>Չի ընդունվել.</b> Հիմնադիրների ցանկը անհրաժեշտ է պետական գրանցման ժամանակ կուսակցության հիմնադրման օրինականությունը ստուգելու համար :
		3. 13-րդ հոդվածի 1-ին մասում «քննիչները» բառից հետո դնել ստորակետ և լրացնել «զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողները» բառերը:	<b>Ընդունվել է մասնակի.</b> Նախագծում արտացոլված է Սահմանադրության համապատասխան նորմը: Սահմանադրությունը կուսակցություն հիմնադրելու կամ կուսակցությանն

			անդամագրվելու ուղղակի արգելք նախատեսել է միայն դատավորների, դատախազների և քննիչների համար : Իսկ զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների կողմից կուսակցություն ստեղծելու և որևէ կուսակցության անդամագրվելու իրավունքի կապակցությամբ սահմանվել է միայն սահմանափակումներ նախատեսելու հնարավորություն:
		4. 14-րդ հոդվածի 2-րդ մասում «նույնական կամ շփոթելու աստիճան նման լինի» բառերից հետո լրացնել «գրանցված կուսակցությունների նախկին անվանումներին,» բառերը:	<b>Ընդունվել է.</b> Կատարվել է համապատասխան փոփոխություն:
		5. 19-րդ հոդվածի 1-ին մասում «ստորաբաժանումներից» բառը փոխարինել «կանոնադրությամբ սահմանված կարգով» բառերով:	<b>Ընդունվել է.</b> Նախագծի այժմ 18-րդ հոդվածի 1-ին մասում կատարվել է համապատասխան փոփոխություն:
		6. 25-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետը լրացնել «բացառությամբ այն դեպքերի, երբ կուսակցությունը դրանց անդամ է, իսկ նվիրատվության նպատակը համատեղ միջոցառումների կազմակերպման ֆինանսավորումն է»	<b>Չի ընդունվել.</b> Նման պարագայում նվիրատվություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է : Միջացառումների կազմակերպումը կարող է իրականացնել հենց ինքը՝ միջազգային կազմակերպությունը,

			<p>առանց կուսակցություններին նվիրատվություն փոխանցելու :</p>
		<p>7. 27-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված՝ կուսակցությունների ֆինանսավորման միջոցների ընդհանուր ծավալը դրամային արտահայտությամբ չի կարող պակաս լինել Ազգային ժողովի վերջին ընտրությունների ժամանակ քվեարկությանը մասնակցած բոլոր կուսակցությունների ընտրական ցուցակների օգտին կողմ տրված ձայների ընդհանուր թվի հազարապատիկից»:</p>	<p><b>Ընդունվել է մասնակի.</b> Կուսակցություններին տրվող ֆինանսավորման չափը ավելացվել է. Նախագծի այժմ 26-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված՝ կուսակցությունների ֆինանսավորման միջոցների ընդհանուր ծավալը չի կարող պակաս լինել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի <i>0,04-ապարիկի</i> եւ Ազգային ժողովի վերջին ընտրությունների ժամանակ ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիների ընդհանուր թվի արտադրյալից:</p>
		<p>8. 27-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ. «Պետական բյուջեից որևէ կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) հատկացվող միջոցները դրամային արտահայտությամբ հաշվարկվում են Ազգային ժողովի վերջին ընտրությունների ժամանակ տվյալ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի օգտին կողմ տրված ձայների ընդհանուր թվի հազարապատիկի, իսկ Ազգային ժողովի հերթական</p>	<p><b>Ընդունվել է մասնակի.</b> Ավելացվել է ֆինանսավորման չափը, իսկ ֆինանսավորումն իրականացվում է համանման բանաձևով :</p>

		ընտրությունների տարվան նախորդող տարում՝ երեքհազարապատիկի չափով »:	
		9. 29-րդ հոդվածի 5-րդ մասում «հարյուրապատիկը» բառը փոխարինել «երկուհարյուրապատիկը» բառով:	<b>Չի ընդունվել.</b> Կուսակցության ստացած նվիրատվությունների աղբյուրը՝ անկախ արժեքից, նշվում է կուսակցության հաշվետվությունում (հոդված 27, մաս 5): Սա ուղղված է ֆինանսավորման թափանցիկությունն ու արդյունավետ վերահսկողությունն ապահովելուն :
		10. 37-րդ հոդվածը լրացնել նոր՝ 4-րդ մասով, հետևյալ խմբագրությամբ. «Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 1 տարվա ընթացքում կուսակցությունները պարտավոր են իրենց կանոնադրությունները համապատասխանեցնել սույն օրենքի պահանջներին»:	<b>Չի ընդունվել.</b> Նման դրույթ նախատեսելը նպատակահարմար չէ, քանի որ հնարավոր չէ վերահսկողություն իրականացնել կանոնադրությունների համապատասխանեցման գործընթացի նկատմամբ : Սա կարող է դիտվել որպես օրենքին հետադարձ ուժի հաղորդում, որը վատթարացնում է անձանց վիճակը :
2	«Աժ պատգամավոր Լ. Զուրաբյան, 2016-12-02 թիվ 02/10.7/19873-16 գրություն	1. Օրենքի նախագծի 26-րդ հոդվածը լրացնել նոր՝ 3-րդ մասով, հետևյալ բովանդակությամբ. <Ազգային ժողովի վերջին ընտրությունների արդյունքում մանդատների բաշխմանը մասնակցած կուսակցություններն ու կուսակցությունների դաշինքները օրենքով սահմանված արտամրցութային կարգով ստանում են հեռուստաընկերություն հիմնելու իրավունք> :	<b>Չի ընդունվել.</b> <եռուստառադիոհեռարձակողների եթերային հեռարձակման լիցենզավորումը իրականացվում է օրենքով սահմանված կարգով՝ մրցույթի միջոցով : Լիցենզավորման մրցույթի մասնակիցների համար օրենքով նախատեսված են հավասար

			պայմաններ :
3	ՀՀ ԱԺ պատգամավոր Հ. Մարգարյան, 2016-12-02 թիվ 02/10.7/19872-16 գրություն	<p>Օրենքի նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ կետում ավելացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ.</p> <p>«Պաշտոնատար անձի կողմից ծառայողական (պաշտոնական) դիրքի օգտագործումը հօգուտ իր կուսակցությանը կարող է համարվել նաև պաշտոնների նշանակումը կամ ազատումը՝ ելնելով կուսակցական պատկանելիությունից երկակի մոտեցումներ և չափորոշիչներ կիրառումից» :</p>	<b>Չի ընդունվել.</b> Նշված հարցը սույն օրենքի կարգավորման առարկան չէ : Դա պետք է նախատեսվի համապատասխան օրենքներով, որոնք պատասխանատվություն են սահմանում նման գործողությունների համար: Ծառայողական դիրքն օգտագործելու յուրաքանչյուր դեպք պետք է առանձին գնահատվի:
4	ՀՀ ԱԺ պատգամավոր Հ. Բարութանյան, 2016-12-02 թիվ 02/10.7/19874-16 գրություն	1. Հոդված 2-ում «ժողովրդի» բառը փոխարինել «քաղաքացիների» բառով :	<b>Չի ընդունվել.</b> Քաղաքացիների արտահայտած կամքը ժողովրդի կամքն է. «ժողովուրդը» ավելի լայն հասկացություն է :
		2. Հոդված 4-ում «հավասար» բառի փոխարեն գրել «իրավահավասար» :	<b>Չի ընդունվել.</b> Օրենքի առջև հավասարությունն ու իրավահավասարությունը նույն նշանակությունն ունեն։ Բացի այդ Սահմանադրությամբ նախատեսված է օրենքի առջև ընդհանուր հավասարության սկզբունքը :
		3. Հոդված 9-ի 2-րդ կետում «1000 հիմնադիր» բառերից հետո դնել վերջակետ, մնացած մասը հանել :	<b>Չի ընդունվել.</b> Կուսակցությունը պետք է ունենա որոշակի տարածքային ներկայացվածություն :
		4. Հոդված 19-ի 2-րդ կետում հանել «բայց ոչ պակաս, քան հարյուր պատվիրակ» բառերը :	<b>Չի ընդունվել.</b> Սա դիտվել է որպես նվազագույն շեմ:

	5. Հոդված 20-ում հանել 2-րդ կետը :	<b>Ընդունվել է.</b> Կատարվել է համապատասխան փոփոխություն :
	6. Հոդված 31-ի 2-րդ կետում «երեք» բառը փոխարինել «յոթ» բառով :	<b>Ընդունվել է մասնակի.</b> «երեք» բառը փոխարինվել է «հինգ» բառով :
	7. Հոդված 35-ում 1-ին կետի վերջից ավելացնել «կամ ՀՀ-ում գրանցված հասարակական կազմակերպության» :	<b>Չի ընդունվել.</b> Վերակազմակերպումը իրավաբանական անձի գոյության դադարեցման ձև է : Կուսակցության գործունեությունը դադարեցրած հիմնադիրները կամ անդամները ցանկացած դեպքում կարող են օրենքով սահմանված կարգով հիմնել հասարակական կազմակերպություն : Ուստի կուսակցությանը՝ հասարակական կազմակերպության վերակազմակերպվելու իրավունք վերապահելու անհրաժեշտությունը բացակայում է :
	8. Հոդված 36-ի 2-րդ կետի 1-ին նախադասությունը ձևակերպել հետևյալ կերպ. «Կուսակցության լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքը համագումարի որոշմամբ փոխանցվում է կուսակցության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին համահունչ գործող Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական կազմակերպությանը կամ հիմնադրամին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե» :	<b>Չի ընդունվել.</b> Նման կարգավորումը հնարավորություն է տալիս այդ միջոցները օգտագործել կուսակցության նպատակների իրականացման համար առանց հասարակական կազմակերպություններ, հիմնադրամներ ստեղծելու : Իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե :
	9. Հոդված 37-ում 3-րդ կետը հանել:	<b>Ընդունվել է.</b> Կատարվել է

			<p>համապատասխան փոփոխություն :</p>
<p>5</p>	<p>ՀՀ ԱԺ պատգամավոր Է. Մարության, 2016-12-09 թիվ 02/10.3/20534-16 գրություն</p>	<p>1. Նախագծի 3-րդ հոդվածով նախատեսվում է, որ կուսակցությունների կազմավորման և գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ինչպես նաև սույն օրենքին համապատասխան ընդունված այլ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով: Առաջարկում եմ պահպանել գործող կարգավորումը, մասնավորապես՝ կուսակցությունների վերաբերյալ օրենսդրությունը սահմանափակել բացառապես օրենսդրական ակտերով, քանի որ կուսակցությունն այնպիսի մարմին է, որ դրան վերաբերող բոլոր խնդիրների լուծումն անհրաժեշտ է ապահովել օրենսդրական մակարդակով: Ըստ այդմ, առաջարկում եմ նշված հոդվածից հանել «, ինչպես նաև սույն օրենքին համապատասխան ընդունված այլ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով» բառերը:</p>	<p><b>Չի ընդունվել.</b> Չի բացառվում նաև ենթաօրենսդրական ակտերով կուսակցության գործունեությանը առնչվող հարցերի կարգավորումը : Այդպես, օրինակ, կուսակցության անանման մեջ մահացած հանրահայտ անձի անունը ժառանգների բացակայության դեպքում կարող է օգտագործվել Կառավարության սահմանած կարգով :</p>
		<p>2. Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ կուսակցությունները հավասար են օրենքի առջև* անկախ իրենց ծրագրային փաստաթղթերում արտացոլված գաղափարախոսությունից, նպատակներից և խնդիրներից: Առաջարկում եմ հավելել, որ կուսակցությունները հավասար են օրենքի առջև՝ նաև անկախ ստեղծման ժամանակից և անդամակցողների թվաքանակից:</p>	<p><b>Ընդունվել է մասնակի.</b> Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասը վերախմբագրվել է հետևյալ բովանդակությամբ՝ «Կուսակցությունները հավասար են օրենքի առջև՝ անկախ իրենց ծրագրային փաստաթղթերում արտացոլված գաղափարախոսությունից, նպատակներից, խնդիրներից և այլ հանգամանքներից»:</p>

		<p>3. Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասով արգելվում է այն կուսակցությունների ստեղծումը կամ գործունեությունը, որոնք քարոզում են սահմանադրական կարգի բռնի տապալում կամ բռնություն են կիրառում սահմանադրական կարգը տապալելու նպատակով: Առաջարկում եմ մասից հանել «սահմանադրական կարգը տապալելու նպատակով» բառերը, քանի որ անկախ նպատակից՝ բռնության քարոզն ու կիրառումն անընդունելի են, առավել ևս կուսակցության մակարդակով:</p>	<p><b>Չի ընդունվել.</b> Նախագծում արտացոլված է Սահմանադրության համապատասխան հոդվածի ձևակերպումը :</p>
		<p>4. Նույն հոդվածի 2-րդ մասով՝ արգելվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում իրավապահ մարմիններում, պետական այլ կազմակերպություններում, նախադպրոցական, դպրոցական և այլ ուսումնական հաստատություններում կուսակցությունների ստորաբաժանումների ստեղծումը կամ գործունեությունը: Առաջարկում եմ խմբագրել այս մասը, քանի որ Հայաստանի Հանրապետության զինված ուժերը, իրավապահ մարմինները և պետական մարմին են, այսինքն դրանք առանձին թվարկելու կարիք չկա, եթե արդեն իսկ զբաղեցնում են, որ պետական մարմիններում կուսակցությունների ստեղծումն արգելվում է:</p> <p>Առաջարկում եմ այդ մասից հանել նաև «պետական այլ կազմակերպություններում,» բառերը, քանի որ դա ևս կրկնություն է:</p>	<p><b>Ընդունվել է մասնակի.</b> Արգելվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական նախադպրոցական, դպրոցական և այլ ուսումնական հաստատություններում, պետական այլ կազմակերպություններում կուսակցությունների ստորաբաժանումների ստեղծումը:</p>
		<p>5. Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ կուսակցության ստեղծման, կուսակցության ծրագրի և կանոնադրության հաստատման, ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների ձևավորման մասին որոշումներն ընդունվում են կուսակցության հիմնադիր համագումարին ներկա առնվազն 100 հիմնադրի միաձայն որոշմամբ: Կարծում եմ՝ այստեղ առավել նպատակահարմար է որոշումների կայացման համար կիրառել որակյալ մեծամասնության սկզբունքը:</p>	<p><b>Ընդունվել է մասնակի.</b> Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը վերաշարադրվել են հետևյալ բովանդակությամբ՝</p> <p>«2. Կուսակցության ստեղծման մասին որոշումն ընդունվում է կուսակցության</p>



			<p>հիմնադիր համագումարին ներկա առնվազն 100 հիմնադրի միաձայն որոշմամբ»:</p> <p>«3.Կուսակցության ծրագրի եւ կանոնադրության հաստատման, պետական գրանցման համար լիազորված անձի (անձանց), ղեկավար եւ վերահսկողություն իրականացնող մարմինների ձեւավորման մասին որոշումներն ընդունվում են կուսակցության հիմնադիր համագումարին ներկա հիմնադիրների ձայների մեծամասնությամբ»:</p>
		<p>6. Պարզ չէ, թե ինչ նպատակ է հետապնդում առաջարկվող՝ կուսակցության տարածքային ստորաբաժանումների հաշվառմանը վերաբերող դրույթը (9-րդ հոդվածի 1-ին մաս, 20-րդ հոդվածի 2-րդ մաս, 37-րդ հոդվածի 3-րդ մաս), ինչպես նաև չհաշվառման իրավական հետևանքը: Ըստ այդմ, առաջարկում եմ այն հանել:</p>	<p><b>Ընդունվել է.</b> Նշված դրույթները հանվել են :</p>
		<p>7. Ըստ Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Պետական գրանցման պահին կուսակցությունը պետք է ունենա ոչ պակաս, քան 1000 հիմնադիր Կարծում եմ, որ նման սահմանումը մեծ խստացում է ստեղծվելիք կուսակցությունների համար և դժվարացնում է գրանցման փուլը հաղթահարելը, քանի որ պետական գրանցումը տեղի ունենալու հիմնադիր համագումարից հետո 3 ամիս անց (11-րդ հոդվածի (2) կետ): Առաջարկում եմ այս մասով պահպանել գործող իրավակարգավորումը, որն ավելի լիբերալ է:</p>	<p><b>Ընդունվել է մասնակի.</b> Սահմանվել է, որ պետական գրանցման պահին կուսակցությունը պետք է ունենա ոչ պակաս, քան 800 անդամ : Իսկ երեք ամիսը փոխարինվել է մեկ տարի ժամկետով :</p>

		<p>8. Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ հայտնաբերված թերությունները շտկելու և պետական գրանցման դիմումը 5 աշխատանքային օրվա ընթացքում կրկին լիազոր մարմին ներկայացնելու դեպքում այն համարվում է ընդունված սկզբնական ներկայացման օրը, և պետական տուրք կրկին չի գանձվում: Նշված ժամկետի ավարտից հետո՝ պետական տուրքի վճարմամբ, պետական գրանցման դիմումը կարող է կրկին պետական լիազոր մարմին ներկայացվել կուսակցության հիմնադիր համագումարի անցկացման օրվանից ոչ ուշ, քան երեք ամսվա ընթացքում:</p> <p>Առաջարկում եմ 1-ին նախադասությունից հետո ավելացնել հետևյալ միտքը. «5 աշխատանքային օրն օբյեկտիվ պատճառներով չբավական լսցնելու դեպքում մինչ այդ ժամկետը լրանալուն նախորդող օրը պետական գրանցման համար լիազորված անձը կարող է ներկայացնել պատճառաբանված դիմում՝ դիմումի ներկայացված ժամկետը ոչ ավել, քան 1 ամսով երկարացնելու վերաբերյալ:», ինչը վճարված պետական տուրքը չկորցնելու հնարավորություն կտա:</p>	<p><b>Ընդունվել է մասնակի.</b> Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ մասը վերաշարադրվել է հետևյալ բովանդակությամբ՝</p> <p>«Հայտնաբերված թերությունները շտկելու եւ պետական գրանցման դիմումը կուսակցության հիմնադիր համագումարի անցկացման օրվանից ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում կրկին պետական լիազոր մարմին ներկայացնելու դեպքում այն համարվում է ընդունված և պետական տուրք կրկին չի գանձվում»:</p>
		<p>9. Նախագծի 11-րդ հոդվածում առաջարկում եմ նախատեսել դրույթ այն մասին, որ կուսակցության պետական գրանցումը մերժվելու դեպքում պետական տուրքը վերադարձվում է:</p>	<p><b>Չի ընդունվել.</b> Պետական տուրքը գանձվում է որպես համապատասխան ծառայությունների դիմաց կատարվող վճար, իսկ տվյալ դեպքում ծառայությունն արդեն իսկ մատուցված է :</p>
		<p>10. Առաջարկում եմ 13-րդ հոդվածում կուսակցությանն անդամակցելու արգելք սահմանել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող և տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովների անդամների, ինչպես նաև Սահմանադրական դատարանի անդամների ու իրավապահ կառույցների աշխատակիցների մասով</p>	<p><b>Չի ընդունվել.</b> Սահմանադրության 46-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, թե որ անձանց համար կարող են արգելքներ կամ սահմանափակումներ նախատեսվել. «Դատավորները, դատախազները և քննիչները չեն</p>

		<p>ևս:</p>	<p>կարող լինել կուսակցության անդամ: Օրենքով կարող են սահմանվել զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների կողմից կուսակցություն ստեղծելու և որևէ կուսակցության անդամագրվելու իրավունքի սահմանափակումներ»:</p>
		<p>11. Նախագծի 14-րդ հոդվածի 3-րդ մասի վերջին նախադասությամբ՝ ժառանգ չունենալու դեպքում մահացած հանրահայտ անձի անունը կարող է օգտագործվել Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Առաջարկում եմ այստեղ սահմանել հստակ ժամկետ, որի ընթացքում կառավարությունը կարող է տվյալ որոշումն ընդունել:</p>	<p><b>Չի ընդունվել.</b> ՀՀ Կառավարության կողմից ընդունված նման որոշում գոյություն ունի :</p>
		<p>12. Առաջարկում եմ 15-րդ հոդվածով սահմանել, որ կուսակցության անվանումը, խորհրդանշանը և այլ խորհրդանիշերը չեն կարող պարունակել վիրավորական կամ զրպարտչական բնույթի բառեր կամ այլ արտահայտություններ:</p>	<p><b>Ընդունվել է.</b> Կատարվել են համապատասխան փոփոխություններ :</p>
		<p>13. Նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ մասով՝ կուսակցություններն ինքնուրույն են որոշում իրենց ներքին կառուցվածքը, նպատակները, գործունեության ձևերն ու մեթոդները, որոնք չեն կարող հակասել ժողովրդավարական սկզբունքներին: Առավելագույն հստակության և շահարկումներից խուսափելու համար՝ առաջարկում եմ «ժողովրդավարական սկզբունքներին» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն ու</p>	<p><b>Չի ընդունվել.</b> Նախագծի նշված նորմը արտացոլում է Սահմանադրության 8-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը՝ «Կուսակցությունների կառուցվածքը և գործունեությունը չեն կարող հակասել ժողովրդավարական սկզբունքներին»:</p>

		օրենքներին» բառերով:	
		<p>14. Նախագծի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասության համաձայն՝ կուսակցության համագումարն իրավասու է քննարկել կուսակցության կանոնադրությամբ նախատեսված ցանկացած հարց: Կարծում եմ, որ նման նորմն ունի անհարկի սահմանափակող նշանակություն և ըստ այդմ առաջարկում եմ կս/մ հանել այն նախագծից, կա՛մ ձևակերպել հետևյալ կերպ. «Կուսակցության համագումարն իրավասու է քննարկել իր որոշմամբ սահմանված ցանկացած հարց:»:</p>	<p><b>Ընդունվել է.</b> Նախագծի այժմ 17-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասությունը վերաշարադրվել է հետևյալ բովանդակությամբ՝ «Կուսակցության համագումարն իրավասու է քննարկել իր որոշմամբ սահմանված ցանկացած հարց, որի վերաբերյալ որոշում կայացնելու իրավունքը օրենքով կամ կանոնադրությամբ վերապահված չէ այլ մարմնի»:</p>
		<p>15. Նախագծի 22-րդ հոդվածի 1-ին մասի (ը) կետով՝ կուսակցությունն իրավունքի ունի օրենքով սահմանված կարգով իրականացնել օրենքով չարգելված և իր կանոնադրությանը համապատասխանող այլ գործունեություն: Գործնականում անհնար է կանոնադրությամբ նախատեսել գործունեության այն բոլոր տեսակները, որոնցով կուսակցությունը կարող է ցանկություն ունենալ զբաղվելու, իսկ կանոնադրության փոփոխությունները բավականին բարդ ընթացակարգով են կատարվում: Ավելին, կանոնադրությանը համապատասխանելու հարցը կարող է դառնալ գնահատողական կատեգորիա և անհարկի վեճերի տեղիք տալ: Այսպիսով, առաջարկում եմ նշված կետից հանել «և իր կանոնադրությանը համապատասխանող» բառերը:</p>	<p><b>Ընդունվել է.</b> Նախագծի համապատասխան հոդվածից հանվել են «և իր կանոնադրությանը համապատասխանող» բառերը:</p>
		<p>16. Ըստ 22-րդ հոդվածի 6-րդ մասի (բ) կետի՝ կուսակցությունների համար երաշխավորվում է ընդդիմադիր գործունեություն իրականացնելու ազատություն, այդ թվում՝ պետական և տեղական ինքնակառավարման</p>	<p><b>Ընդունվել է մասնակի.</b> Նախագծի այժմ 21-րդ հոդվածի 6-րդ մասի (բ) կետը վերաշարադրվել է հետևյալ</p>

		<p>մարմիններին ներակայացնել առաջարկություններ, որոնք համապատասխան մարմինների կողմից պարտադիր ենթակա են քննարկման: Առաջարկում եմ նախատեսել հստակ ժամկետ, որի ընթացքում պետական և տեղական ինքնակառավարման մարմինները կարող են քննարկել և պատասխանել այդ առաջարկություններին, ինչպես նաև նախատեսել, որ գրավոր ներկայացված առաջարկություններին այդ մարմինները պատասխանում են գրավոր:</p>	<p>բովանդակությամբ՝</p> <p>«բ) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, պաշտոնատար անձանց ներակայացնել անհատական և կոլեկտիվ հանրագրեր, որոնք համապատասխան մարմինների և պաշտոնատար անձանց կողմից օրենքով սահմանված կարգով ենթակա են քննարկման»:</p>
		<p>17. Նախագծի 25-րդ հոդվածի 3-րդ մասի վերջին նախադասությամբ՝ կուսակցությանը նվիրատվության կարգով տրվող անշարժ գույքը չի կարող օտարվել նվիրատվության օրվանից առնվազն հինգ տարվա ընթացքում: Նշված կարգավորումը գործում է նաև այժմ, սակայն այն անհարկի սահմանափակում է կուսակցության իրավունքները: Առաջարկում եմ այդ ժամկետը դարձնել 2 տարի, միևնույն է կուսակցության հաշվետվության և աուդիտի տվյալների մեջ գույքի օտարումն արտացոլվում է, ինչպես և արտացոլվում է դրամական միջոցների ավելացումը: Մինչդեռ այդ սահմանափակման պատճառով կուսակցությունը ֆինանսական խնդիրներ ունենալու պարագայում չի կարողանա վաճառել իրեն իսկ պատկանող գույքը և օգտագործել ստացված միջոցները: Միևնույն ժամանակ այսպես թե այնպես կուսակցությունը գումարի դիմաց կարող է գրավադրել իր գույքը:</p>	<p><b>Չի ընդունվել.</b></p>
		<p>18. Նույն հոդվածի 4-րդ մասի (7) կետի համաձայն՝ նվիրատվություններ չի թույլատրվում քաղաքացիություն չունեցող անձանցից: Առաջարկում եմ այս նորմից բացառություն նախատեսել</p>	<p><b>Չի ընդունվել.</b> Կուսակցությունը քաղաքացիների միավորում է, բացի այդ միջազգային պրակտիկայում</p>

		<p>Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակություն ունեցող քաղաքացիություն չունեցող անձանց մասով, քանի որ, ըստ իս, վերջիններս մշտական բնակության փաստի ուժով իրավունք ունեն իրենց ընտրած եղանակով մասնակից լինել ներքաղաքական կյանքին՝ այդ թվում նաև իրենց ընտրած կուսակցությանը նվիրատվություն կատարելու միջոցով:</p>	<p>ընդունված է օտարերկրյա աղբյուրներից նվիրատվություններ ստանալու արգելքը :</p>
		<p>19. Նախագծի 25-րդ հոդվածի 8-րդ մասի սահմանամբ՝ կուսակցությանը օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի դրամական հարկացումները կատարվում են անկանքսիկ: Առաջարկում եմ նախագծից հանել այս նորմը, քանի որ գործնականում այն անհարկի բարդացնելու է փոխանցման կարգը: Օրինակ, որոշ կուսակցությունների մոտ դրամահայթայթման երեկոյան անցկացման ավանդույթ է ձևավորվել, որի ընթացքում խիստ անհարմար և բարդ է անկանքսիկ փոխանցման եղանակով դրամ ստանալը: Կարծում եմ՝ հարցը կարգավորվում է 28-րդ հոդվածի 5-րդ մասով՝ կուսակցության ստացած՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկը գերազանցող արժողությամբ նվիրատվության աղբյուրը նշվում է կուսակցության հաշվեկրթությունում:</p>	<p><b>Չի ընդունվել.</b> որոշակի չափը գերազանցող նվիրատվությունները անկանքսիկ իրականացնելու պահանջը հնարավորություն է տալիս ապահովել թափանցիկությունը և վերահսկողություն իրականացնել ֆինանսավորման նկատմամբ :</p>
		<p>20. Առաջարկում եմ պարտադիր աուդիտ նախատեսել բացառապես խորհրդարանական կուսակցությունների մասով:</p>	<p><b>Չի ընդունվել.</b> Կուսակցությունների ֆինանսական գործունեության թափանցիկության պահանջը հավասարապես վերաբերում է բոլոր կուսակցություններին : Նման ձևակերպումը կհանգեցնի կուսակցությունների նկատմամբ խտրական և անհավասար վերաբերմունքի :</p>

6	<p>ՀՀ ԱԺ պատգամավոր Ն. Զոհրաբյան, 2016-12-07 թիվ 02/10.7/20234-16 գրություն</p>	<p>1. «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի (Կ-1095-11.10.2016-ՄԻ-010/0), (այսուհետ՝ նախագիծ) հոդված 18-ի 2-րդ մասում «կուսակցության համագումարի բացառիկ իրավասություններից» հանել կուսակցության լուծարման իրավասությունը : Կուսակցության համագումարի ոչ իրավազոր լինելու պարագայում կուսակցության լուծարման իրավասությունը վերապահել կուսակցության գործադիր մարմնին :</p>	<p><b>Ընդունվել է.</b> Կուսակցության լուծարման մասին որոշում կայացնելը հանվել է կուսակցության համագումարի բացառիկ իրավասությունից :</p>
		<p>2. Նախագծի հոդված 36-ի 3-րդ մասում ավելացնել նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Կուսակցության համագումարի ոչ իրավազոր լինելու պարագայում կուսակցության լուծարման իրավասությունը վերապահվում է կուսակցության գործադիր մարմնին» :</p>	<p><b>Ընդունվել է.</b> Կուսակցության լուծարման մասին որոշում կայացնելը հանվել է կուսակցության համագումարի բացառիկ իրավասությունից և վերապահվել է կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնին, եթե կուսակցության համագումարը իրավազոր չէ :</p>
7	<p>ՀՀ ԱԺ պատգամավոր Հ. Սահակյան, 2016-12-13 թիվ 02/10.3/20764-16 գրություն</p>	<p>1. Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածում &lt;&lt;արգելման,&gt;&gt; բառից հետո լրացնել &lt;&lt;վերսկսման&gt;&gt;, բառը:</p>	<p><b>Ընդունվել է.</b> Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>
		<p>2. Միաժամանակ, առաջարկում ենք կարգավորման առարկայում նշել, որ կարգավորման առարկան են հանդիսանում նաև կուսակցության ֆինանսական գործունեության և գույքի գոյացման հետ կապված հարցերը:</p>	<p><b>Ընդունվել է.</b> Կատարվել է համապատասխան լրացում :</p>
		<p>3. Առաջարկում ենք քննարկել Նախագծի 2-րդ, 7-րդ և այլ հոդվածներում &lt;&lt;քաղաքացիների&gt;&gt; բառից առաջ &lt;&lt;Հայաստանի Հանրապետության&gt;&gt; բառերի լրացման հարցը, որ պարզ լինի, որ այն վերաբերվում է ՀՀ քաղաքացիներին:</p>	<p><b>Ընդունվել է.</b> Կատարվել են համապատասխան փոփոխություններ :</p>
		<p>4. Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասում խոսվում է վերահսկողություն իրականացնող մարմնի ձևավորման մասին,</p>	<p><b>Չի ընդունվել.</b> Նշված հարցերը կարգավորվում են ՀՀ Ընտրական</p>

		սակայն նախագծում բացակայում են վերահսկող մարմնի վերաբերյալ որևէ դրույթ վերջինիս իրավական կարգավիճակի մասին:	օրենսգրքով :
		5. Առաջարկում ենք Նախագծի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերում համապատասխանաբար <<անունը,>> <<անունները>> բառերից հետո լրացնել <<ազգանունը,>>, <<ազգանունները>> բառը:	<b>Ընդունվել է.</b> Կատարվել են համապատասխան փոփոխություններ :
		6. Նախագծում ի թիվս կուսակցության ծրագրի, կանոնադրության օգտագործվում է նաև <<այլ ծրագրային փաստաթղթեր>> հասկացությունը, որը Նախագծի և ոչ մի հոդվածում չի երևում թե ինչ է իրենից ներկայցնում: Առաջարկում ենք սահմանել, թե ինչ է ծրագրային փաստաթուղթը:	<b>Ընդունվել է.</b> Կատարվել է համապատասխան փոփոխություն :
		7. Նախագծի 12-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված է, որ յուրաքանչյուր անձ կարող է միաժամանակ լինել միայն մեկ կուսակցության անդամ: Սակայն, այն ձևական բնույթ կրող դրույթ է , որի խախտման համար սահմանված չէ այդ անձի նկատմամբ պատասխանատվություն, միաժամանակ չկան սահմանված մեխանիզմները թե ինչպես պետք է պարզվի անձը այլ կուսակցության անդամ է թե չէ: Առաջարկում ենք Նախագծով սահմանել այդ մեխանիզմները:	<b>Ընդունվել է մասնակի.</b> Սահմանվել է, որ յուրաքանչյուր անձ կարող է միաժամանակ լինել միայն մեկ կուսակցության <i>հիմնադիր</i> :
		8. Առաջարկում ենք Նախագծի 13-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով և սահմանել, որ կուսակցության անդամ չի կարող լինել այլ կուսակցության անդամը: Միաժամանակ առաջարկում ենք Նախագծի 13-րդ հոդվածում սպառիչ թվարկել, թե ովքեր չեն կարող լինել կուսակցության անդամ, կամ հիմնադրել կուսակցություն ինչը մասնավորապես պայմանավորված է << Սահմանադրության (2015 թ-ի փոփոխություններով) 5-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով՝ համաձայն որի օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ սահմանադրական օրենքներին և օրենքներին:	<b>Չի ընդունվել.</b> Նշված հոդվածում վերարտադրված են Սահմանադրության համապատասխան դրույթները կուսակցության անդամ լինելու արգելքի կամ սահմանափակման վերաբերյալ: Լրացուցիչ կարգավորում տալու անհրաժեշտությունը բացակայում է : Այլ կուսակցության անդամ լինելու



	Այսինքն՝ այլ օրենքներով սահմանված սահմանափակումները պետք է համապատասխանեն Նախագծին:	հանգամանքը ստուգելը լրացուցիչ պարտավորություն է առաջացնում ամեն անգամ ստուգելու նշված հանգամանքը, բացի այդ վերահսկողություն իրականացնելն անհնար է :
	9. Առաջարկում ենք Նախագծի 16-րդ հոդվածի 1-ին մասում <<Սահմանադրության>> բառից հետո լրացնել <<սույն օրենքին>> բառերը, իսկ <<և>> շաղկապից հետո լրացնել <<այլ>> բառը:	<b>Չի ընդունվել.</b> Նախագծում առկա ձևակերպումը ներառում է թե սույն օրենքը և թե այլ օրենքները :
	10. Առաջարկում ենք Նախագծի 17-րդ հոդվածում հստակեցնել, թե ինչ է նկատի ունեցվել <<խնդիրները լուծելու ուղիները>>, ասելով: Այն որոշակի չէ:	<b>Ընդունվել է.</b> Նախագծի՝ «Կուսակցության ծրագիրը» վերտառությամբ 17-րդ հոդվածը հանվել է :
	11. Նախագծի 26-րդ հոդվածի 1-ին մասում <<հավասար>> բառից հետո <<ոչ խտրական>> հանել: Միաժամանակ, առաջարկում ենք 1-ին մասի 1-ին կետում <<իրենց>> բառը փոխարինել <<պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների>> բառերով:	<b>Ընդունվել է մասնակի.</b> «իրենց» բառը փոխարինվել է «պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների» բառերով :
	12. Նախագծի 33-րդ հոդվածի 7-րդ մասում <<Կասեցման հիմքերը վերացված գնահատվելու դեպքում Սահմանադրական դատարանը կայացնում է որոշում՝ կուսակցության գործունեությունը վերսկսված համարելու մասին:>> նախադասությունը հանել, քանի որ << Սահմանադրության (2015 փոփոխություններով) 168-րդ հոդվածի համաձայն Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով՝ 12) օրենքով սահմանված դեպքերում որոշում է կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու վերաբերյալ: Այսինքն՝ << սահմանադրական դատարանը Սահմանադրությամբ իրավասու չէ ընդունելու որոշում կուսակցության գործունեությունը վերսկսված համարելու մասին:	<b>Ընդունվել է.</b> Կատարվել է փոփոխություն :

8	<p>ՀՀ Կառավարություն</p>	<p>1. Առաջարկվում է «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ՝</p> <p>«Արգելվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, <i>պետական</i> նախադպրոցական, դպրոցական եւ այլ ուսումնական հաստատություններում, <i>պետական այլ կազմակերպություններում</i> կուսակցությունների ստորաբաժանումների տեղակայումը»:</p>	<p>Ընդունվել է.</p>
		<p>2. Առաջարկվում է նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ՝</p> <p>«Արգելվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց միջամտությունը կուսակցությունների գործունեությանը՝ բացառությամբ <i>սույն</i> օրենքով սահմանված դեպքերի»:</p>	<p>Ընդունվել է.</p>
		<p>3. Առաջարկվում է նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասը վերախմբագրվել է հետևյալ բովանդակությամբ՝</p> <p>«Կուսակցությունը ձեւավորվում է <i>Հայաստանի Հանրապետության</i> քաղաքացիների նախաձեռնությամբ՝ հիմնադիր համագումարի որոշմամբ»:</p>	<p>Ընդունվել է.</p>
		<p>4. Առաջարկվում է նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասը վերախմբագրել է հետևյալ բովանդակությամբ՝</p>	<p>Ընդունվել է.</p>

		<p>«Կուսակցության հիմնադիր համագումարը որոշումներ է ընդունում կուսակցության ստեղծման, կուսակցության ծրագրի ընդունման եւ կանոնադրության հաստատման, պետական գրանցման համար լիազորված անձի (անձանց), ղեկավար եւ վերահսկողություն իրականացնող մարմինների կազմավորման մասին, ինչպես նաեւ իր կազմից <i>ընտրում է</i> մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավար (կամ ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար)»:</p>	
		<p>5. Առաջարկվում է նախագծի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «5) հիմնադիր համագումարին մասնակցած հիմնադիրների անունները, անձնագրերի պատճենները ստորագրությունները»:</p>	Ընդունվել է.
		<p>6. Առաջարկվում է նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասը վերախմբագրվել է հետևյալ բովանդակությամբ՝ «Պետական գրանցման համար <i>սույն օրենքով</i> սահմանված պահանջների չպահպանման դեպքում պետական լիազոր մարմինը վերադարձնում է պետական գրանցման դիմումը: Կուսակցության պետական գրանցման դիմումը վերադարձնելու մասին լիազոր մարմնի որոշումը պետք է լինի գրավոր եւ պատճառաբանված՝ նշում պարունակելով <i>սույն օրենքի</i> այն դրույթի վերաբերյալ, որի պահանջները չեն պահպանվել»:</p>	Ընդունվել է.
		<p>7. Առաջարկվում է նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում կատարել փոփոխություն.</p>	Ընդունվել է.

		<p>«3) կուսակցության պետական գրանցման դիմումը ներկայացվել է կուսակցության հիմնադիր համագումարի անցկացման օրվանից մեկ տարի անց»:</p>	
		<p>8. Առաջարկվել է նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ մասը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «Կուսակցության պետական գրանցումը մերժելու մասին լիազոր մարմնի որոշումը պետք է լինի գրավոր եւ պատճառաբանված՝ հղում պարունակելով <i>սույն օրենքի</i> այն դրույթներին, որոնք մերժման հիմք են հանդիսացել»:</p>	Ընդունվել է.
		<p>9. Առաջարկվում է նախագծի 12-րդ հոդվածի 2-րդ մասը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ՝  «Կուսակցության անդամներ կարող են լինել տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության գործունակ քաղաքացիները»:</p>	Ընդունվել է.
		<p>10. Առաջարկվում է նախագծի 12-րդ հոդվածի 6-րդ մասը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ՝  «Կուսակցության անդամներն իրավունք ունեն ընտրել եւ ընտրվել տվյալ կուսակցության ու նրա տարածքային ստորաբաժանումների ղեկավար եւ վերահսկողություն իրականացնող մարմիններում, ներկա գտնվել կուսակցության համագումարի նիստերին, ծանոթանալ կուսակցության մարմինների արձանագրություններին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները, տեղեկատվություն ստանալ կուսակցության ու նրա</p>	Ընդունվել է.

		<p>ղեկավար մարմինների գործունեության վերաբերյալ, ստանալ փաստաթղթերի պաճեններ՝ կուսակցության կանոնադրության փոփոխությունների, գույքի կառավարումից ստացած դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաեւ ստանալ նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացությունը, <i>բողոքարկել կուսակցության մարմինների որոշումներն ու գործողությունները, կամովին դադարեցնել իրենց անդամակցությունը</i>»:</p>	
		<p>11. Առաջարկվում է նախագծի 13-րդ հոդվածի այժմ 3-րդ մասում «ընթացքում» բառը փոխարինել «ժամանակահատվածում» բառով:</p>	<p>Ընդունվել է.</p>
		<p>12. Առաջարկվում է նախագծի 14-րդ հոդվածի 2-րդ մասը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ՝</p> <p>«Կուսակցության անվանումը կամ հապավումը չպետք է նույնական կամ շփոթելու աստիճան նման լինի գործունեությունը դադարեցրած կուսակցությունների անվանումներին, գրանցված կուսակցությունների ու այլ հասարակական միավորումների, տվյալ կուսակցության գրանցմանը նախորդող հինգ տարվա ընթացքում <i>«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով գործունեությունը արգելված կուսակցությունների, ինչպես նաեւ գրանցման գործընթացում գտնվող կուսակցությունների անվանումներին կամ դրանց հապավումներին</i>»:</p>	<p>Ընդունվել է.</p>

		<p>13. Առաջարկվում է նախագծի 14-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «եթե հանրահայտ անձը, իսկ նրա մահացած լինելու դեպքում նրա ժառանգը գտնում է, որ կուսակցության գործունեությունն ստվերում է այդ անձի հեղինակությունը, ապա կարող է կուսակցության անվանման մեջ անձի անունն օգտագործելու իրավունքից կուսակցությանը զրկելու պահանջով դիմել դատարան» նախադասությունը:</p>	<p>Ընդունվել է.</p>
		<p>14. Առաջարկվում է նախագծի 16-րդ հոդվածի 1-ին մասը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «Կուսակցությունը, նրա կառուցվածքային եւ տարածքային ստորաբաժանումները գործում են կուսակցության կանոնադրության հիման վրա, որի դրույթները չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, միջազգային պայմանագրերին, օրենքներին և ենթօրենսդրական նորմատիվ իրավական ակտերին»:</p>	<p>Ընդունվել է.</p>
		<p>15. Առաջարկվում է նախագծի 18-րդ հոդվածի 2-րդ մասը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «2. Կուսակցության համագումարն իրավազոր է, եթե նրան ներկա են համագումարի պատվիրակների ընդհանուր թվի առնվազն <i>կեսը</i>, բայց ոչ պակաս, քան 100 պատվիրակ»:</p>	<p>Ընդունվել է.</p>
		<p>16. Առաջարկվում է Նախագծի 18-րդ հոդվածի 3-րդ մասը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «Կուսակցության համագումարի որոշումները,</p>	<p>Ընդունվել է.</p>

		բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի, ընդունվում են համագումարին ներկա պատվիրակների ձայների մեծամասնությամբ»:	
		17. Առաջարկվում է նախագծի 21-րդ հոդվածի 6-րդ մասի «բ» կետը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «բ) պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին, պաշտոնատար անձանց ներակայացնել <i>անհատական և կոլեկտիվ հանրագրեր, որոնք համապատասխան մարմինների և պաշտոնատար անձանց կողմից օրենքով սահմանված կարգով ենթակա են քննարկման</i> »:	Ընդունվել է.
		18. Առաջարկվում է նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «Կանոնադրությամբ եւ ծրագրով սահմանված նպատակների իրականացման համար կուսակցությունը սեփականության կամ այլ գույքային իրավունքով կարող է ունենալ ցանկացած գույք: Կուսակցությունը սեփականության իրավունքով չի կարող ունենալ այնպիսի գույք, որը հանված է շրջանառությունից»:	Ընդունվել է.
		19. Առաջարկվում է նախագծի 24-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետից հանել «և միջազգային հասարակական շարժումներից» բառերը:	Ընդունվել է.
		20. Առաջարկվում է նախագծի 25-րդ հոդվածից հանել «պետական և տեղական ինքնակառավարման մարմինները միջոցառումներ անցկացնելու նպատակով կուսակցություններին ապահովում են անհրաժեշտ պայմաններով» դրույթը:	Ընդունվել է.
		21. Առաջարկվում է նախագծի 27-րդ հոդվածի 4-րդ	Ընդունվել է.

		մասից հանել այն դրույթը, որ կուսակցության հաշվետվությունում նշվում է նաև վճարումները կատարած կուսակցության անդամների թիվը:	
		22. Առաջարկվում է նախագծի 27-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Կուսակցության ստացած նվիրատվությունների աղբյուրը՝ անկախ արժեքից, նշվում է կուսակցության հաշվետվությունում»:	Ընդունվել է.
		23. Առաջարկվում է նախագծի 30-րդ հոդվածի 2-րդ մասը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Կուսակցության հրապարակած եւ վերահսկիչ-վերստուգիչ ծառայությանը ներկայացրած հաշվետվության հավաստիությունը ստուգելու համար վերջինիս պահանջի դեպքում կուսակցությունը պարտավոր է հինգ օրվա ընթացքում տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն կուսակցության դրամարկղային եւ բանկային մուտքերի եւ ելքերի վերաբերյալ, ներկայացնել նախնական հաշվապահական հաշվառման եւ ներկայացրած հաշվետվության հավաստիությունը ստուգելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր»:	Ընդունվել է.
		24. Առաջարկվում է նախագծի 36-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝  «Կուսակցությունների մասին» Հայաստանի	Ընդունվել է.



		<p>Հանրապետության 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-410-Ն օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասը Հանրապետության նախագահի մասով ուժը կորցնում է նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:</p>	
		<p>25. Առաջարկվում է նախագծի 32-րդ հոդվածի 3-րդ մասը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ՝</p> <p><i>«Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով կասեցման ժամանակահատվածում կուսակցությանն արգելվում է իրականացնել ցանկացած գործունեություն, բացառությամբ այն գործողությունների, որոնք անհրաժեշտ են կասեցման հիմք հանդիսացող խախտումները վերացնելու համար եւ կուսակցության՝ որպես իրավաբանական անձի գործունեությունն ապահովելու համար»:</i></p>	<p>Ընդունվել է.</p>
		<p>26. Առաջարկվում է նախագծի 32-րդ հոդվածի 5-րդ մասը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ՝</p> <p><i>«Վարչական պատասխանատվության ենթարկելուց հետո՝ երեսնօրյա ժամկետում խախտումը չվերացնելու դեպքում Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը այդ մասին անհապաղ տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին և Հայաստանի Հանրապետության կառավարությանը»:</i></p>	<p>Ընդունվել է.</p>
		<p>27. Առաջարկվում է նախագծի 36-րդ հոդվածի 6-րդ մասում սահմանել՝</p>	<p>Ընդունվել է.</p>

		<p>«Կուսակցության պետական գրանցման համար մինչև 2017 թվականի փետրվարի 1-ը ներկայացված դիմումների վրա տարածվում են «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-410-Ն օրենքով սահմանված պետական գրանցման մասին դրույթները: Եթե կուսակցության պետական գրանցման համար 2017 թվականի փետրվարի 1-ից մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ներկայացված դիմումները չեն համապատասխանում սույն օրենքով սահմանված պահանջներին, ապա պետական գրանցում իրականացնող մարմինը դիմումը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում որոշում է կայացնում դիմումը վերադարձնելու մասին՝ նշելով սույն օրենքի այն դրույթները, որոնց չի համապատասխանում պետական գրանցման դիմումը: Սույն օրենքի պահանջներին չհամապատասխանելու հիմքով վերադարձված դիմումները հիմնադիր համագումարի անցկացման օրվանից մեկ տարվա ընթացքում կրկին</p>	
--	--	--	--

		ներկայացվելու դեպքում պետական տուրք չի գանձվում»:	
		28. Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածից, որը սահմանում է օրենքի կարգավորման առարկան հանել «այլ» բառը:	Ընդունվել է.
		29. Առաջարկվում է նախագծի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ՝  «3) հիմնադիր համագումարի արձանագրությունը, <i>ինչպես նաև</i> կուսակցության ստեղծման, մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարի (կամ ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի) նշանակման կամ ընտրության, տարածքային ստորաբաժանումների կազմավորման, դրանց գտնվելու վայրի, կանոնադրության հաստատման ու ծրագրային փաստաթղթերի ընդունման, պետական գրանցման համար լիազորված անձի (անձանց), ղեկավար եւ վերահսկողություն իրականացնող մարմինների կազմավորման մասին որոշումները»:	Ընդունվել է.
		30. Առաջարկվում է նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասից հանել «գրավոր և» բառերը:	Ընդունվել է.
		31. Առաջարկվում է նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «գրավոր և» բառերը:	Ընդունվել է.
		32. Առաջարկվում է նախագծի 13-րդ հոդվածում, <i>ինչպես նաև</i> բոլոր այն հոդվածներում, որտեղ կատարվում է 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության դրույթների բառացի վերարտադրություն, հղում կատարել Սահմանադրության համապատասխան դրույթներին:	Ընդունվել է.
		33. Առաջարկվում է նախագծի 14-րդ հոդվածի 3-րդ	Ընդունվել է.

		մասում «անձ» բառից առաջ լրացնել «ֆիզիկական» բառը:	
		34. Առաջարկվում է նախագծի 16-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում «խորհրդանիշեր» բառից առաջ լրացնել «այլ» բառը.	Ընդունվել է.
		35. Առաջարկվում է նախագծի 16-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ և 7-րդ կետերում «լիազորություններ» եզրույթը փոխարինել «իրավունքները և պարտականությունները» բառերով:	Ընդունվել է.
		36. Առաջարկվում է նախագծի 21-րդ հոդվածի 1-ին մասի «7» կետից հանել «և ասոցիացիաների» բառերը:	Ընդունվել է.
		37. Առաջարկվում է նախագծի 30-րդ հոդվածի վերնագրում «կուսակցությունների» բառից հետո լրացնել «գործունեության» բառը:	Ընդունվել է.
		38. Առաջարկվում է նախագծի 9-րդ գլխի վերնագրում «վերակազմակերպումը» բառից առաջ լրացնել «կուսակցության» բառը:	Ընդունվել է.
		39. Առաջարկվում է նախագծի 32-րդ հոդվածի 4-րդ մասում «զգուշացնում» բառն փոխարինել «նախագգուշացնում» բառով:	Ընդունվել է.
		40. Առաջարկվում է նախագծի 34-րդ հոդվածը («կուսակցության վերակազմակերպումը») վերախմբագրել.  <b>«Հոդված 34. Կուսակցության վերակազմակերպումը</b>	Ընդունվել է.

		<p>1. Կուսակցությունը կարող է կուսակցության համագումարի՝ սույն օրենքով սահմանված կարգով ընդունված որոշմամբ վերակազմակերպվել (միաձուլվել, միանալ, բաժանվել կամ առանձնանալ) այլ կուսակցության:</p> <p>2. Կուսակցության վերակազմակերպման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի կանոններին համապատասխան:»</p>	
		<p>41. Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «Կուսակցությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կամավոր միավորում է, որի նպատակը հանրաքվեներին, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու եւ հասարակության եւ պետության քաղաքական կյանքին մասնակցության այլ ձեւերով ժողովրդի քաղաքական կամքի ձեւավորմանն ու արտահայտմանը նպաստելն է»:</p>	<p>Ընդունվել է.</p>
		<p>42. Առաջարկվում է 32-րդ հոդվածի (կուսակցության գործունեության կասեցումը) 1-ին կետում նախատեսել հետևյալ հիմքը՝</p>	<p>Ընդունվել է.</p>

		«2) կուսակցությունը երկու անգամ անընդմեջ չի մասնակցել Ազգային ժողովի, Երևան, Գյումրի, Վանաձոր քաղաքների ավագանիների ընտրություններին»:	
		43. Առաջարկվում է նախագծի 12-րդ հոդվածի 6-րդ մասում կատարել համապատասխան լրացում՝ սահմանելով, որ կուսակցության յուրաքանչյուր անդամ իրավունք ունի կամովին դադարեցնել իր անդամակցությունը:	Ընդունվել է.
		44. Առաջարկվում է նախագծի 24-րդ հոդվածի 1-ին մասը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ՝  «1. Կուսակցություններն իրավունք ունեն գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների, ներառյալ՝ վարկերի, փոխառությունների, երրորդ անձանց կողմից կուսակցության պարտքի մարման տեսքով նվիրատվություններ ստանալու ֆիզիկական եւ իրավաբանական անձանցից, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի»:	Ընդունվել է.
		45. Առաջարկվում է նախագծի 16-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանել.  «3. Կուսակցության կանոնադրությամբ սահմանվում են նաև Ազգային ժողովի ընտրություններին և Երևան, Գյումրի, Վանաձոր քաղաքների	Ընդունվել է.

		<p>ավագանիների ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների ձևավորման կարգը: <i>Ընտրական ցուցակների ձևավորման ժամանակ առնվազն հաշվի են առնվում կուսակցությունների անդամների, ինչպես նաև տարածքային ստորաբաժանումների ներկայացրած առաջարկությունները</i>»:</p>	
		<p>46. Առաջարկվում է նախագծի 36-րդ հոդվածում նախատեսել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մաս.</p> <p>«4. Սույն օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները Հանրապետության նախագահի, Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի անդամների, Հաշվեքննիչ պալատի անդամների և Կենտրոնական բանկի խորհրդի անդամների մասով ուժի մեջ են մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձման օրը»:</p>	<p>Ընդունվել է.</p>
		<p>47. Առաջարկվում է նախագծի 33-րդ հոդվածի 2-րդ մասի վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ՝</p>	<p>Ընդունվել է.</p>

		«Կուսակցության գործունեության արգելումը հիմք չէ այդ կուսակցության առաջադրմամբ ընտրված պատգամավորի, <i>Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանու անդամի</i> լիազորությունները դադարեցնելու համար»:	
		48. Առաջարկվում է նախագծից հանել կուսակցության տարածքային ստորաբաժանումների վերաբերյալ պահանջը : Առաջարկվում է նախագծի 9-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանել, որ պետական գրանցման նպատակով կուսակցությունը պետական լիազոր մարմին է ներկայացնում տեղեկատվություն կուսակցության տարածքային ստորաբաժանումների վերաբերյալ :	Ընդունվել է.
		49. Առաջարկվում է նախագծի 17-րդ հոդվածի 1-ին մասը վերախմբագրել նոր բովանդակությամբ՝  «1. Կուսակցության բարձրագույն ղեկավար մարմինը կուսակցության համագումարն է ( <i>համագումար, ժողով, համաժողով, վեհաժողով և այլն</i> ), որը հրավիրվում է կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կողմից կուսակցության կանոնադրությամբ նախատեսված ժամկետում, բայց ոչ ուշ, քան 4 տարին մեկ անգամ: Կուսակցության համագումարում ընտրվում են կուսակցության կանոնադրությամբ սահմանված մարմինները, որոնք հաշվետու են համագումարին»:	Ընդունվել է.
		50. Առաջարկվում է նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝	Ընդունվել է.



		<p>«2. Կուսակցության ստեղծման մասին որոշումն ընդունվում է կուսակցության հիմնադիր համագումարին ներկա առնվազն 100 հիմնադրի միաձայն որոշմամբ:</p> <p>3. Կուսակցության ծրագրի եւ կանոնադրության հաստատման, պետական գրանցման համար լիազորված անձի (անձանց), ղեկավար եւ վերահսկողություն իրականացնող մարմինների ձեւավորման մասին որոշումներն ընդունվում են կուսակցության հիմնադիր համագումարին ներկա հիմնադիրների ձայների մեծամասնությամբ» :</p>	
		<p>51. Առաջարկվում է նախագծի <i>հոդված 10-ը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ՝</i></p> <p>1. Պետական գրանցման համար օրենքով սահմանված պահանջների <i>չպահպանման</i> դեպքում պետական լիազոր մարմինը վերադարձնում է պետական գրանցման դիմումը: Կուսակցության պետական գրանցման դիմումը վերադարձնելու մասին լիազոր մարմնի որոշումը պետք է լինի գրավոր եւ պատճառաբանված՝ նշում պարունակելով իրավական ակտի այն դրույթի վերաբերյալ, որի պահանջները <i>չեն պահպանվել:</i></p>	Ընդունվել է.
		52. Առաջարկվում է նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ	Ընդունվել է.

		<p>մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝</p> <p>«Հայտնաբերված թերությունները շտկելու եւ պետական գրանցման դիմումը կուսակցության հիմնադիր համագումարի անցկացման օրվանից ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում կրկին պետական լիազոր մարմին ներկայացնելու դեպքում այն համարվում է ընդունված և <i>պետական փուրք կրկին չի գանձվում</i>»:</p>	
		<p>53. Առաջարկվում է Նախագծի 9-րդ հոդվածի 4-րդ մասի (պետական գրանցման նպատակով կուսակցության կողմից պետական լիազոր մարմին ներկայացվող փաստաթղթեր) 2-րդ կետում սահմանել. «հանրային կյանքի կազմակերպման հայեցակարգի վերաբերյալ կուսակցության մոտեցումներն արտացոլող ծրագրի առնվազն երկու օրինակ»</p>	<p>Ընդունվել է.</p>

		<p>54. Առաջարկվում է լրացնել կուսակցության գործունեությանը վերաբերող սկզբունքները (հոդված 4).</p> <p>«2. Կուսակցության գործունեությունը</p>	<p>Ընդունվել է.</p>
--	--	---	---------------------

		<p>հիմնվում է անդամության կամավորության, անդամների իրավահավասարության, սեռից, ռասայից, մաշկի գույնից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից կախված խտրականության արգելման, կուսակցության անկախության, ինքնակառավարման, կոլեգիալության, գործունեության թափանցիկության, հրապարակայնության եւ հաշվետվողականության սկզբունքների վրա»:</p>	
		<p>55. Առաջարկվում է նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ՝</p> <p>«2. Պետական գրանցման պահին կուսակցությունը պետք է ունենա ոչ պակաս, քան 800 <i>անդամ</i>, որոնք ներկայացնում են Երեւան քաղաքը կամ Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն 1/3-ը կամ Երեւան քաղաքի եւ Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն 1/4-ը, ինչպես նաեւ տարածքային</p>	<p>Ընդունվել է.</p>

		<p>ստորաբաժանումներ՝</p> <p>1) Երեւան քաղաքում՝ առնվազն երեք ստորաբաժանում կամ</p> <p>2) Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն 1/3-ում՝ յուրաքանչյուրում առնվազն մեկ ստորաբաժանում կամ</p> <p>3) Երեւան քաղաքում եւ Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն 1/4-ում՝ յուրաքանչյուրում առնվազն մեկ ստորաբաժանում»:</p>	
		<p>56. Առաջարկվում է օրենքի նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ.</p> <p>«3. Կուսակցության պետական գրանցումը կատարում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը՝ Արդարադատության նախարարությունը (այսուհետ՝ պետական լիազոր մարմին)»:</p>	<p>Ընդունվել է.</p>

		<p>57. Առաջարկվում է նախագծից հանել հոդված 17-ը (կուսակցության ծրագիրը):</p>	Ընդունվել է.
		<p>58. Առաջարկվում է նախագծի 23-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանել.</p> <p>«3. Մեկ ֆիզիկական անձի կողմից անդամավճարի առավելագույն չափը տարեկան չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի հազարապատիկը»:</p>	Ընդունվել է
		<p>59. Առաջարկվում է նախագծից հանել նվիրատվության կատարման օրվանից մինչև վեց ամիս առաջ գրանցված իրավաբանական անձանցից նվիրատվությունների արգելման մասին դրույթը (հոդված 24, մաս 4, կետ 5):</p>	Ընդունվել է
		<p>60. Առաջարկվում է հոդված 13-ը (Կուսակցությանն անդամակցելու արգելքները) շարադրել հետևյալ բովանդակությամբ.</p> <p>1. Կուսակցության հիմնադիր կամ անդամ չեն կարող լինել դատավորները, դատախազները,</p>	Ընդունվել է

		<p>քննիչները:</p> <p>2. Օրենքով կարող են սահմանվել զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների կողմից կուսակցություն ստեղծելու և որևէ կուսակցության անդամագրվելու իրավունքի սահմանափակումներ:</p> <p>3. Իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում կուսակցության անդամ չեն կարող լինել Հանրապետության նախագահը, Մարդու իրավունքների պաշտպանը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամները, Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի անդամները, Հաշվեքննիչ պալատի անդամները, Կենտրոնական բանկի խորհրդի անդամները:</p>	
		<p>61. Առաջարկվում է նախագծի 18-րդ հոդվածի 1-ին մասի «2» թիվը փոխարինել «4» թվով:</p>	<p>Ընդունվել է</p>

		62. Առաջարկվում է նախագծի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը լրացնել «բացառությամբ սույն օրենքի փոփոխությամբ պայմանավորված փոփոխությունների և լրացումների» բառերով:	Ընդունվել է
		63. Առաջարկվում է նախագծի 18-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ կետով. «4) իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունում է սույն օրենքի փոփոխությամբ պայմանավորված՝ կուսակցության կանոնադրության և ծրագրի փոփոխությունները և լրացումները.»:	Ընդունվել է
		64. Առաջարկվում է նախագծի 19-րդ հոդվածի 4-րդ մասի «կատարելու» բառից հետո լրացնել «՝ բացառությամբ սույն օրենքի փոփոխությամբ պայմանավորված փոփոխությունների և լրացումների» բառերը:	Ընդունվել է

ՀՀ ԱԺ պատգամավոր Խ. Հարությունյան	1. Հողված հասկացությունը Կուսակցությունը՝ կազմակերպման	2. Կուսակցության դա հանրային կյանքի հայեցակարգի և	Ընդունվել է մասնակի. Նշված դրույթները ավելացվել են որպես պետական գրանցման համար ներկայացվող ծրագրի վերաբերյալ պահանջ :
-----------------------------------	---	---	--

		<p><i>գաղափարախոսության, դրանցով պայմանավորված քաղաքական նպատակների և խնդիրների շուրջ քաղաքացիների կամավոր միավորում է, որը հանրաքվեներին, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու եւ հասարակության եւ պետության քաղաքական կյանքին մասնակցության այլ ձեւերով նպաստում է ժողովրդի քաղաքական կամքի ձեւավորմանն ու արտահայտմանը:</i></p> <p><i>Կուսակցությունը ունի հանրային կյանքի կազմակերպման սեփական հայեցակարգն ու գաղափարախոսությունը արտացոլող ծրագիր և իր գործունեությունը կարգավորող կանոնադրություն:</i></p> <p><i>Կուսակցությունը պետական գրանցման պահից ձեռք է բերում ոչ առեւտրային իրավաբանական անձի կարգավիճակ:</i></p> <p><i>Կուսակցության սահմանման վերաբերյալ առաջարկությունը ձևավորված է ելնելով այն թեզից, որ կուսակցությունները, ի տարբերություն հասարակական կազմակերպությունների, մասնակցելով իշխանության համար պայքարին պարտավոր են հանրությանը ներկայանալ հանրային կյանքի կազմակերպման սեփական դրոկտրինով և այն հիմնավորող</i></p>	
--	--	---	--



		<p>գաղափարախոսությամբ: ԸՆդ որում նշված երկու ինստիտուտները պետք է միս ու արյուն հաղորդեն կուսակցության ծրագրին , որը ոչ այլ ինչ է քան պատմական կոնկրետ ժամանակահատվածում, քաղաքական զարգացումների կոնկրետ պայմաններում կուսակցության քաղաքական հայեցակարգից և գաղափարախոսությունից բխող քաղաքական նպատակների հիերարխիա է և դրանց հասնելու խնդիրների հանրույթ է: Ի դեպ կուսակցության ծրագրի գաղափարը արտացոլված է 8.1 և 17 հոդվածներում:</p> <p>Կուսակցությունը հրապարակային պատասխանատվություն է ստանձնում հանրության առջև իր ծրագրի իրականացման և այդ կերպ հանրության հիմնական հատվածի սպասելիքները բավարարելու առումով:</p>	
		<p>2. Հոդված 4. Կուսակցությունների գործունեության սկզբունքները</p> <p>2. Կուսակցության գործունեությունը հիմնվում է անդամության կամավորության, անդամների իրավահավասարության, ներկուսակցական քաղաքական քննարկումներում կարծիքների ազատ արտահայտման, խտրականության բացառման, կուսակցության անկախության, ինքնակառավարման, կոլեգիալության, գործունեության թափանցիկության,</p>	<p><b>Չի ընդունվել.</b> Նշվածը ապահովվում է կուսակցության անդամների իրավահավասարության սկզբունքի միջոցով:</p>

		<p>հրապարակայնության եւ հաշվետվողականության սկզբունքների վրա:</p> <p>Խորհրդարանական կառավարման համակարգում կուսակցությունների քաղաքական որակների և որակյալ որոշումներ կայացնելու կարողությունների ձևավորման խնդիրը ձեռք է բերում առանձնահատուկ նշանակություն: Իսկ այդ որակների ձևավորման լավագույն ճանապարհը՝ ներկուսակցական ժողովրդավարության խթանումն է:</p>	
		<p>3. Հողված 6. Պեպոությունը եւ կուսակցությունները</p> <p>1. Արգելվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց միջամտությունը կուսակցությունների գործունեությանը՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:</p> <p>2. Կուսակցությունների անդամները, որոնք Հայաստանի Հանրապետության պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում պաշտոններ են զբաղեցնում, իրավունք չունեն իրենց ծառայողական (պաշտոնեական) դիրքն օգտագործել հոգուտ կուսակցական շահերի: Նշված անձինք իրենց պաշտոնեական</p>	<p><b>Ընդունվել է.</b> Կուսակցությանն անդամակցելու իրավունքի սահմանափակումներն ու արգելքները սահմանվել են ՀՀ Սահմանադրությանը համապատասխան :</p> <p>Նշված անձինք իրավունք ունեն անդամակցել կուսակցություններին՝ պահպանելով օրենքով նախատեսված սահմանափակումները :</p>

		<p>պարտականությունները կատարելիս կաշկանդված չեն կուսակցության որոշումներով:</p> <p>Արդյո՞ք սա նշանակում է, որ քաղճառայողները կամ զինճառայողները կարող են լինել կուսակցության անդամ, բայց պայմանով, որ այդ հանգամանքը չպետք է կաշկանդի նրանց պաշտոնեական գործունեությունը և արդյո՞ք այս նորմը հակասության մեջ չէ հոդված 5.2-ին: Հարկավոր է հստակեցնել ձևակերպումները:</p>	
		<p>4. Հոդված 8. Կուսակցության հիմնադիր համագումարի կողմից որոշումների ընդունումը</p> <p>2. Կուսակցության ստեղծման, կուսակցության ծրագրի եւ կանոնադրության հաստատման, ղեկավար եւ վերահսկողություն իրականացնող մարմինների ձեւավորման մասին որոշումներն ընդունվում են կուսակցության հիմնադիր համագումարին ներկա <i>հիմնադիրների ձայների մեծամասնությամբ, բայց ոչ պակաս քան 100 հիմնադրի կողմ ձայներով:</i></p> <p>Եթե առաջարկվող նորմի իմաստը այն է, որ հիմնադիր փաստաթղթերը ընդունվեն անառարկելիորեն, ինչը կարող է դառնալ նոր ձևավորվող քաղաքական կառույցի ներքին կայունության գրավականը, ապա դա</p>	<p><b>Ընդունվել է մասնակի.</b> Նախագծ 8-րդ հոդվածում սահմանվել է, որ կուսակցության ստեղծման մասին որոշումն ընդունվում է կուսակցության հիմնադիր համագումարին ներկա առնվազն 100 հիմնադրի միաձայն որոշմամբ:</p> <p>Իսկ կուսակցության ծրագրի եւ կանոնադրության հաստատման, պետական գրանցման համար լիազորված անձի (անձանց), ղեկավար եւ վերահսկողություն իրականացնող մարմինների ձեւավորման մասին որոշումներն ընդունվում են կուսակցության հիմնադիր համագումարին ներկա հիմնադիրների</p>

		<p>արհեստաձին պահանջ է և բոլորովին չի կարող նպաստել ներքին միասնությանը և կայունությանը, քանի որ այդ պահանջը կարող է նպաստել կուսակցության ներսում ոչ թե կոմպրոմիսների ճանապարհով, այլ անհարկի անհատական հեղինակության ճնշմամբ որոշման կայացմանը: Եթե կա մտավախություն, որ ոչ միաձայն որոշում ընդունելու պարագայում դեռևս չձևավորված քաղաքական միավորումում կարող է առաջանալ պառակտման վտանգ, ապա եթե առկա լինեն այնպիսի տարաձայնություններ, որոնք կարող են հանգեցնել հիմնադիրների անհաշտ և անհամատեղելի դիրքորոշումներին, ապա նույնիսկ միաձայն որոշման պարագայում այդ անհարթությունները չեն վերանում՝ դեռ մի բան էլ կարող են քողարկվել ձևական մոտեցումներով և ավելի մեծ վնաս հասցնել ներկուսակցական առողջ միջանձնային մթնոլորտի ձևավորմանը:</p>	<p>ձայների մեծամասնությամբ:</p>
		<p>5. Հոդված 9. Կուսակցության պետական գրանցման կարգը</p> <p>2. Պետական գրանցման պահին կուսակցությունը պետք է ունենա ոչ պակաս, քան 500 (այս պահանջը հակասում է 7.2-ի պահանջին, քանի որ եթե կուսակցության հիմնադիր համագումարը իրավազոր է առնվազն 100 հիմնադրի</p>	<p><b>Ընդունվել է մասնակի.</b> Կուսակցության գրանցման համար սահմանվել է մեկ տարի ժամանակ համագումարի անցկացումից հետո : Ինչ վերաբերում է անդամների թվաքանակին, ապա սահմանվել է 800 անդամ ունենալու պահանջ : Տարածքային ստորաբաժանումների վերաբերյալ</p>

	<p>առկայության պարագայում, ապա պետք է ենթադրել, որ այդ թվաքանակը պետք է կազմի կուսակցության հիմնադիրների ընդհանուր թվի առնվազն 50%-ից ոչ պակաս (համաձայն իմ առաջարկի) և հետևաբար համաձայն 7,2 կետի պահանջի կուսակցության հիմնադիր համագումարի կայացման պահին հիմնադիրների թիվը կարող է լինել առնվազն 199 մարդ: Ենթադրել, որ համագումարից մինչև կուսակցության գրանցումը կուսակցությունը պետք է համալրվի առնվազն 800 մարդով, այն էլ սույն հոդվածում ամրագրված պահանջներին համապատասխան՝ լուրջ չէ: Եթե նույնիսկ ենթադրվում է, որ հիմնադիր համագումարից հետո կուսակցության գրանցումը կարելի կլինի իրականացնել 3 ամսվա ընթացքում և այն դեպքում միայն, երբ կուսակցության անհատական կազմի համալրման արդյունքում անդամների թվաքանակը կկազմի 1000 մարդ, այսինքն շուրջ 900-ով համալրվելուց հետո, ապա դեռ փաստ չէ, որ այդ ժամանակահատվածում նորաստեղծ կուսակցությունը կարող է համալրվել այդ քանակի անդամներով և հետևաբար միայն այդ փաստով կուսակցության գրանցումը կարող է մերժվել: Ուստի եռամսյա ժամկետի սահմանումը բոլորովին իմաստազուրկ է: Կարծում եմ հարկավոր է սահմանել ընդամենը գրանցման պահին կուսակցության անդամների թվաքանակի</p>	<p>դրույթները պահպանվել են որոշակի փոփոխություններով, քանի որ ամեն դեպքում կուսակցությունը պետք է ունենա որոշակի տարածքային ներկայացվածություն :</p>
--	--	--

պահանջը: Միաժամանակ առաջարկում են սահմանել նորաստեղծ կուսակցության անդամների 500 թվաքանակը (օրինակ ԱՄՆ հանրապետական կուսակցությունը իր կանոնադրությամբ սահմանել է անդամների հենց նշված թվաքանակը ) հիմնադիր, որոնք ներկայացնում են Երեւան քաղաքը կամ Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն 1/3-ը կամ Երեւան քաղաքի եւ Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն 1/3-ը, ինչպես նաեւ տարածքային ստորաբաժանումներ Երեւան քաղաքում կամ Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն 1/3-ում կամ Երեւան քաղաքում եւ Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն 1/3-ում:

Ընդգծվածը արհեստական պահանջներ են: Եթե օրենսդիրի մտահոգությունն այն է, որ նոր ձևավորվող կառույցը պատրաստ լինի քաղաքական գործընթացներում ազդեցիկ մասնակցություն ունենալուն, ապա կարծում են այդ հարցում նորաստեղծ կառույցից առավել ոչ ոք չահագրգռված չէ և ներկուսակցական կառուցվածքը, այդ թվում մարզերում և Երևանում ներկայացված լինելը կլինի այդ կառույցի ամենազխավոր խնդիրը, բայց ոչ թե այն պատճառով, որ դա օրենքի պահանջն է: Միաժամանակ առավել քան ակնհայտ է, որ այդ

		<p>պահանջը ձևական բոլորն էլ կփորձեն ապահովել ինչը սակայն չի կարող լինել նրանց ազդեցության կամ քաղաքականության մեջ ակտիվ մասնակցության գրավականը: Առաջարկում եմ այդ պահանջները հանել:</p>	
		<p>6. Հոդված 9-ի (Կուսակցության պետական գրանցման կարգը) 4-րդ մասի 4-րդ կետից հանել «որը պետք է պարունակի անդամի անունը, ստորագրությունը, նշում՝ համապատասխան տարածքային ստորաբաժանման վերաբերյալ, կուսակցությանը անդամագրվելու իրավունքի սահմանափակումների կամ արգելքի մասին» բառերը :</p> <p>Առաջարկվում է հանել նույն մասի 5րդ կետը.</p> <p>«5) հիմնադիր համագումարին մասնակցած հիմնադիրների անունները, անձնագրերի պատճենները, ստորագրությունների ցանկը, նշում կուսակցություն ստեղծելու սահմանափակումների կամ արգելքի մասին »:</p> <p>4 և 5 կետերում արված իմ առաջարկը բխում է նախորդ առաջարկներից և ենթադրում է, որ հարկավոր է հնարավորինս զերծ մնալ պետական մարմինների կողմից կուսակցությունների ներքին կյանքին ուղղակի կամ անուղղակի միջամտելու ցանկացած հնարավորությունից:</p>	<p><b>Չի ընդունվել.</b> Նշված դրույթներն անհրաժեշտ են ստուգելու կուսակցությունների հիմնադրման օրինականությունը :</p>

		<p>7. Նախագծի 9-րդ հոդվածի 5-րդ մասը հանել :</p> <p>Եթե դնում ենք 1000 կամ 500 անդամ ունենալու պահանջը, ապա այս ժամկետային սահմանափակումը պետք է վերացնել:</p>	<p><b>Ընդունվել է մասնակի.</b> Ժամկետը երկարաձգվել է. սահմանվել է, որ փաստաթղթերը պետական գրանցման համար ներկայացվում են կուսակցության հիմնադիր համագումարի անցկացման օրվանից ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում (9-րդ հոդվածի 5-րդ մաս):</p>
		<p>8. Հոդված 10-ի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝</p> <p>1. Պետական գրանցման համար օրենքով սահմանված պահանջների <i>չպահպանման</i> դեպքում պետական լիազոր մարմինը վերադարձնում է պետական գրանցման դիմումը: Կուսակցության պետական գրանցման դիմումը վերադարձնելու մասին լիազոր մարմնի որոշումը պետք է լինի գրավոր եւ պատճառաբանված՝ նշում պարունակելով իրավական ակտի այն դրույթի վերաբերյալ, որի պահանջները <i>չեն պահպանվել:</i></p>	<p><b>Ընդունվել է.</b> Կատարվել է համապատասխան փոփոխություն :</p>
		<p>9. Հոդված 10-ի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝</p> <p>2. Հայտնաբերված թերությունները շտկելու եւ պետական գրանցման դիմումը կրկին լիազոր մարմին ներկայացնելու դեպքում այն համարվում</p>	<p><b>Ընդունվել է մասնակի.</b> Սահմանվել է, որ հայտնաբերված թերությունները շտկելու եւ պետական գրանցման դիմումը կուսակցության հիմնադիր համագումարի անցկացման օրվանից ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում կրկին</p>



		<p>է ընդունված և կուսակցության գրանցումը կատարվում է <i>ճշգրտված փաստաթղթերի ներկայացման օրով</i> եւ պետական տուրք կրկին չի գանձվում:</p> <p>Ժամկետային սահմանփակումները բոլորովին անտեղի են: Եթե դրանք արվում են նրա համար, որ խթանեն կուսակցության գրանցումը փաստաթղթերի սկզբնական ներկայացման օրով և այն նկատառումով, որ կրկին պետական տուրք չգանձվի, ապա պետական տուրքի յուրացումը ինչ որ ոչինչ չնշանակող ժամկետները խախտելու պատճառով՝ անթույլատրելի է և նման է պետական ռեկետի: Փոխարենը պետք է ելնել այն դրույթից, որ կուսակցությունը ամենաշահագրգռվածն է իր արագ գրանցմամբ և որևէ կերպ փաստաթղթերի ճշգրտումը չսահմանափակել ժամկետով և չկապել պետական տուրքի հետ: Առաջարկում եմ նաև ավելացնել նոր մաս հետևյալ բովանդակությամբ,</p> <p><i>Կուսակցության ստեղծման գործընթացը կասեցնելու մասին կուսակցության լիազոր ներկայացուցչի հրապարակային հայտարարության դեպքում պետական տուրքը վերադարձվում է՝ այդ մասին պետական լիազոր մարմնին ներկայացված դիմումի հիման վրա:</i></p>	<p>պետական լիազոր մարմնին ներկայացնելու դեպքում այն համարվում է ընդունված և պետական տուրք կրկին չի գանձվում (հոդված 10, մաս 2):</p> <p>Ինչ վերաբերում է պետական տուրքը վերադարձնելուն, ապա պետական տուրքը վճարվում է որոշակի ծառայությունների դիմաց, որոնք արդեն իսկ կատարված են լինում :</p>
--	--	---	---

		<p>10. Հողված 11. (Կուսակցության պետական գրանցումը մերժելը) 1-ին մասից հանել 2-րդ և 3-րդ կետերը :</p> <p>2 կետը վերաբերվում է այն թերություններին, որոնք կարող են վերացվել, հետևաբար դրանց համար չի կարելի մերժել, իսկ 3 կետը արհեստաձին պահանջ է: Փոխարենը առաջարկում եմ ավելացնել նոր 2' կետ հետևյալ բովանդակությամբ.</p> <p><i>2'. Կուսակցության պետական գրանցումը մերժելու մասին որոշումը ուժի մեջ մտնելուց հետո նույն անունով և հիմնադիրների 1/5 մասի նույն կազմով կուսակցության գրանցումն արգելվում է:</i></p>	<p><b>Չի ընդունվել.</b> Նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է այն կարևոր պահանջները, որոնք չպահպանելու դեպքում կուսակցությունը չի կարող ստեղծված համարվել: Միևնույն ժամանակ սա չի բացառում ընդհանուր կարգով կուսակցության գրանցման համար դիմելու հնարավորությունը:</p> <p>3-րդ մասով սահմանվել է մեկ տարի ժամկետ, որը բավական երկար ժամանակահատված է, և այն լիովին բավարար է օրենքով սահմանված պահանջներին</p> <p>համապատասխանությունն ապահովելու ու պետական գրանցման դիմում ներկայացնելու համար:</p> <p>Կուսակցության պետական գրանցումը մերժելու մասին որոշումը ուժի մեջ մտնելուց հետո նույն անունով և հիմնադիրների 1/5 մասի նույն կազմով կուսակցության գրանցումն արգելելը անհարկի կսահմանափակի միավորումներ ստեղծելու ազատությունը:</p> <p>Կուսակցության պետական գրանցումը մերժելու դեպքում հիմնադիրները</p>
--	--	--	--

			<p>իրավունք ունեն կրկին ընդհանուր կարգով ներկայացնել պետական գրանցման դիմում, որը կարող է մերժվել միայն օրենքով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում :</p>
		<p><b>11. Հոդված 12. Կուսակցության անդամները</b></p> <p>1. Կուսակցությանն անդամակցությունը կամավոր է եւ անհատական:</p> <p>2. Կուսակցության անդամներ կարող են լինել տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:</p> <p>2-րդ մասի 2-րդ նախադասությունը՝ «Հայաստանի Հանրապետությունում ընտրական իրավունքով օժտված այլ անձինք կարող են անդամակցել կուսակցությանն առանց նրա կանոնադրության և ծրագրի հաստատման, ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններում ընտրվելու իրավունքի» խախտում է կուսակցության անդամների հավասարության և խտրականության բացառման սկզբունքը և հասկանալի չէ թե ինչ խնդիր է լուծում: Կասկածից վեր է, որ նման պարագայում կուսակցության</p>	<p><b>Ընդունվել է մասնակի.</b> Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>Կուսակցությանն իրապես անդամակցելու համար գործունակությունն անհրաժեշտ նախապայման է :</p>

		<p>մեջ կձևավորվեն տարբեր իրավունքներ ունեցող անդամների խմբեր՝ արտոնյալների ներկուսակցական խավ: Բացի այդ այս դրույթը հակասում է սույն հոդվածի 6-րդ կետի պահանջին:</p>	
		<p>12. Առաջարկում եմ 12-րդ հոդվածում ավելացնել նոր մաս հետևյալ բովանդակությամբ.</p> <p><i>Կուսակցության անդամը կարող է հեռացվել կուսակցությունից հանցագործություն կատարելու համար՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա, ինչպես նաև կուսակցության որդեգրած և հրապարակած քաղաքական կուրսի դեմ գործունեություն ծավալելու համար:</i></p>	<p><b>Չի ընդունվել.</b> Նման ձևակերպում օրենքով նախատեսելը կմիջամտի կուսակցությունների ներքին գործունեությանը : Ցանկացած պարագայում կուսակցությունները կարող են նման հիմքեր սահմանել իրենց կանոնադրությամբ :</p>
		<p>13. Հոդված 17-ը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ՝</p> <p>Կուսակցությունը պետք է ունենա ծրագիր, որում արտացոլվում են հանրային կյանքի կազմակերման հայեցակարգից և գաղափարախոսությունից բխող, կուսակցության գործունեության նպատակները եւ խնդիրները, ինչպես նաեւ այդ նպատակներին հասնելու եւ խնդիրները լուծելու ուղիները:</p> <p>Հարային կյանքում կուսակցության քաղաքական պատասխանատու մասնակցությունը</p>	<p><b>Ընդունվել է մասնակի.</b> Սա նախատեսվել է որպես պետական գրանցման համար ներկայացվող ծրագրի վերաբերյալ պահանջ :</p>

		<p>երաշխավորելու համար անհրաժեշտ է կուսակցության ծրագիրը կապել հանրային կյանքի կազմակերպման կուսակցության հայեցակարգի և գաղափարախոսության հետ:</p>	
		<p>14. Սահմանել կուսակցությունների դաշինքի ձևավորման ընթացակարգը: Մասնավորապես կարելի է ամրագրել դրույթներ, որոնք հանրությանը բացահայտում են քաղաքական դաշինք կազմելու իրական պատճառները պայմանավորված հանրային կյանքում հանրության հիմնային հատվածի սպասելիքների բավարարման համատեղ կարողությունների առավելությունները՝ բացառելով բացառապես քաղաքական կոնյուկտուրայով պայմանավորված որոշումները: Այլ կերպ ասած կուսակցությունների դաշինքի ձևավորումը պետք է բխի հանրության շահերից, հանրային կյանքի տարբեր ոլորտներում ավելի արդյունավետ քաղաքականություն իրականացնելու նպատակով: Դաշինքի շուրջ բանակցությունները պետք է լինեն թափանցիկ և նպատակների առումով ընկալելի հանրության համար:</p>	<p><b>Չի ընդունվել.</b>          Կուսակցության ներքին իրավասությանը վերաբերող հարցեր են :          Այդ կապակցությամբ պետության կողմից իրավակարգավորում նախատեսելը կդիտվի որպես միջամտություն կուսակցության ներքին գործերին :</p>
		<p>15. Հոդված 22-ը և 23-ը տեղերով փոխել, նախ ամրագրել կուսակցության պարտավորությունները, ապա դրանց համարժեք և դրանցով պայմանավորված իրավունքները:</p>	<p><b>Չի ընդունվել.</b></p>

		<p>16. Քննարկել կուսակցական մամուլ և հեռուստաընկերություն ունենալու նպատակահարմարության հարցը:</p>	<p><b>Չի ընդունվել.</b> Կուսակցություններն իրավունք է վերապահվել հիմնելու զանգվածային լրատվության միջոցներ և հրատարակչություններ, իսկ օրենքով չնախատեսված ձեռնարկատիրական գործունեության այլ տեսակներով զբաղվելն արգելվում է :</p>
		<p>17. Առաջարկում եմ հոդված 31-ում (կուսակցությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները) հստակեցնել, թե ինչ մարմնի մասին է խոսքը:</p>	<p><b>Չի ընդունվել.</b> Խոսքը Ընտրական օրենսգրքով նախատեսված Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայության մասին է :</p>
		<p>18. Հոդված 33-ի (Կուսակցության գործունեության կասեցումը) 7-րդ մասը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ՝</p> <p>7. Կուսակցության գործունեությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի որոշմամբ կասեցվում է: Կասեցման հիմքերը վերացնելու նպատակով Սահմանադրական դատարանի որոշմամբ սահմանվում է ողջամիտ ժամկետ: Կուսակցության կողմից կասեցման հիմքերի վերացման վերաբերյալ ապացույցները ներկայացվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան: Կասեցման հիմքերը վերացված գնահատվելու դեպքում Սահմանադրական</p>	<p><b>Չի ընդունվել.</b> Կասեցման հիմքերը վերացված չգնահատվելու դեպքում կասեցման հիմքերը վերացնելու նպատակով Սահմանադրական դատարանի կողմից կուսակցությանը ողջամիտ <b>երկրորդ և վերջնական</b> ժամկետի տրամադրումը անհրաժեշտություն է առաջացնում սահմանել նաև համապատասխան հետևանքներ այն խախտելու համար: Նման հետևանք ըստ էության կարող է լինել միայն կուսակցության գործունեության դադարեցումը, որն էլ փաստացիորեն կհանգեցնի գործունեության արգելմանը: Մինչդեռ կուսակցությունների գործունեությունը</p>

		<p>դատարանը կայացնում է որոշում՝ կուսակցության գործունեությունը վերսկսված համարելու մասին: Կասեցված հիմքերը վերացված չգնահատվելու դեպքում կասեցման հիմքերը վերացնելու նպատակով Սահմանադրական դատարանը կուսակցությանը տրամադրում է ողջամիտ երկրորդ և վերջնական ժամկետ:</p>	<p>կարող է արգելվել միայն հակասահմանադրական լինելու դեպքում : Քանի որ անգամ ՍԴ-ի կողմից խախտումները վերացնելու համար երկրորդ ժամկետ սահմանելուց հետո խախտումները կարող են դարձյալ չվերացվել, ուստի նախատեսվել է, որ կուսակցության գործունեությունը վերսկսվում է կասեցման հիմք հանդիսացող հանգամանքները վերացվելու դեպքում :</p>
		<p>19. Հոդված 34. Կուսակցության գործունեության արգելումը</p> <p>2. Կուսակցության գործունեության արգելումը հիմք չէ այդ կուսակցության առաջադրմամբ ընտրված պատգամավորի լիազորությունները դադարեցնելու համար:</p> <p>Այսինքն Ազգային ժողովում պահպանվում է համանուն խմբակցությունը: Մտորելու բան կա:</p>	<p><b>Չի ընդունվել.</b> Պատգամավորի լիազորությունների դադարման հիմքերը սպառիչ սահմանված են Սահմանադրությամբ :</p>